Ճանաչել գիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՈՒՍԱՐԱՐ

2(395)
31.01.2015
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

## ՄԵՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԸ

*(Հայկական բանակ-23)*

... Ո՞րն է հայ զինվորականի ստացած դասը Ցեղասպանությունից անցած 100-ամյա հեռավորությունից: Միջազգային մարդասիրական իրավունքները, առաջատար երկրների ստանձնած մարդու իրավունքների պաշտպանությունը, պետությունների միջև ուժի կիրառման դատապարտումը և նման սկզբունքները հրաշալի են ու աննման, մենք լիովին կիսում ենք դրանք ու մեր համերաշխությունը հայտնում, բայց ***մեր ժողովրդի անվտանգության լավագույն երաշխիքը Ազգային բանակն է՝ ամբողջ հայության միասնությամբ զորացած:***

... Պատմության մեջ երբեք չի եղել տևական մի ժամանակաշրջան, երբ մեր ազգը խաղաղ ու անվտանգ ապրած լինի: Միշտ էլ եղել ու լինելու է պայքար մեր պետության, մեր ժողովրդի, մեր նվիրական արժեքների համար: Այս բարդ տարածաշրջանում, ուր հազարամյակներ շարունակ ապրել ենք, կերտել ու արարել, անվտանգության խնդիրները, ցավոք, մշտապես օրակարգում են լինելու: Սա պիտի գիտակցենք մեկընդմիշտ: Այս պարագայում իր դարավոր բնօրրանում ապրող հայ ժողովրդի խաղաղության երաշխիքը առաջին հերթին ***Համաժողովրդական բանակի*** վերածվելու ունակությունը պետք է լինի: ***Համաժողովրդական բանակ***: Ասել է թե՝ ***յուրաքանչյուր հայ պիտի իրեն զգա այս մեծ, համահայկական ուժի մասնիկ:*** Համաժողովրդական բանակի վերածվելու համար ես երկու բանաձև եմ առաջարկում:

**Առաջին:** Մենք, որպես հիմք՝ ունենք x և y թվաքանակներով զորքեր հայկական երկու պետություններում: Այդ թվաքանակը հայ ժողովրդի գաղափարական զինվորագրմամբ պետք է վերածի 1,5 մլն-ի՝ լրացնելու համար 1915-ի նոսրացած մեր շարքերը, իսկ եթե հասնենք նրան, որ համաժողովրդական բանակին միանան ՀՀ-ի 3 միլիոն և ԼՂՀ-ի 150 հազար բնակիչները, հույս կարող ենք ունենալ նաև, որ մեր օրինակով վարակված՝ երկրագնդի ամեն հայ իրեն համաժողովրդական բանակի զինվոր կզգա՝ այն հասցնելով հայերի ամբողջական թվաքանակին՝ 10 միլիոնի:

**Երկրորդ:** Համաժողովրդական բանակի յուրաքանչյուր անդամ իրեն պիտի զինվոր կամ հրամանատար համարի: Այսպես՝ մեր քաղաքացիական բոլոր կառույցների ղեկավարները, հայրենիքում և Սփյուռքում բիզնես կամ այլ գործունեություն ղեկավարող անձինք պետք է գիտակցեն, որ իրենք Համաժողովրդական բանակի հրամանատարներ են՝ ջոկի, դասակի, վաշտի, գնդի:

Միայն այդպես կարող ենք պայքարել դեպի հայկական երկու հանրապետություններն ուղղված սպառնալիքների դեմ՝ օգտագործելով մեր աշխարհասփյուռ հայրենակիցների, կրթական, գիտական, լոբբիստական, ֆինանսական հնարավորությունները, բարձր հեղինակությունը: Եվ միայն այդպես կարող ենք հասնել 2014թ. տարեմուտի ուղերձի վերջում նշված համազգային նվաճմանը, որ ***սպառնալիքները մեզ հասնեն բոլորովին թուլացած, իրենց ուժն ու վտանգավորությունը կորցրած:***

*ՀՀ պաշտպանության նախարար*
*Սեյրան Օհանյանի 2015թ. տարեմուտի ուղերձից*

## ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՀԶՈՐ ՎԱՀԱՆԸ

«Արևիկ»նախադպրոցական խմբի ժիր ու աշխույժ սաներից է հնգամյա Գոռը: Ամեն առավոտ պայուսակն ուսին շտապում է դպրոց: Սիրում է դպրոցը, իր նոր ընկերներին: Հետաքրքրասեր է անչափ, իսկ ինչու-ները սկիզբ ու վերջ չունեն: Մանկական հետաքրքրությամբ ու հրճվանքով թերթում է իր առաջին դասագիրքը՝ «Վաղը դպրոց կգնամ»:

Ամենից ավելի սիրում է նկարել: Նկարում է ամեն ինչ՝ ոսկեշող արև, բարձրահասակ ու հսկա ծառեր, աստղազարդ ու լազուր երկինք, երփնագույն ծաղիկներ: Մեկնաբանում է նկարածը և սիրով նվիրում տնեցիներին:

Նորակառույց դպրոցի մուտքի դռան ճակատին խոշոր տառերով գրված «Բարի գալուստ»-ը, չգիտես ինչու, այսօր նկատեց միայն: Անասելի ուրախությունից ու հպարտությունից սևաթույր աչիկները հանկարծ փայլեցին: Ոգևորված ու զարմանքից աչքերը լայն բացած՝ մեկիկ-մեկիկ իր զրնգուն ձայնով բարձրաձայն կարդաց իրեն ծանոթ տառերը՝ ***ա, ի, ու, տ,*** ապա բաց թողեց տատիկի ձեռքն ու փախավ:

«Ու՞ր գնաց, ի՞նչ եղավ, Գոռն ինչու՞ ներս չմտավ,- անհանգստացավ տատիկը,- զանգը ուր որ է կհնչի»:

Փողոցի անկյունում՝ նորակառույցի պատի վրա, լուսեղեն սյունի նման վեր էր խոյանում խոշոր ու շողշողուն տառերով մի բառ՝ «Դեղատուն»: Փոքրիկին զարմանք ու ոգևորություն էին ներշնչել այդքան խոշոր տպագիր տառերը: Նա ամուր գրկել էր գրության ներքևի տառերը:

-Տատի՛, հապա նայի՛ր, ինչքա՛ն մեծ ու գեղեցիկ **Ու** է, տես՝ ինչպես է փայլում, ասես արև լինի:

Ուրախությունից ու հպարտությունից տատիկի աչքերը լցվեցին: Նա երջանիկ էր:

«Մեր գիրն անբաժան է մեզանից, ինչպես հանապազօրյա հացը: Մեծն Մաշտոցի աստվածային ձեռքով գրված այբուբենը սկիզբ ունեցավ, բայց վախճան՝ երբեք»,- համարյա լսելի ձայնով շշնջաց տատիկը:

Կյանքում պատահական ոչինչ չի լինում: Որքան էլ զարմանալի է, բայց այս Ամանորին Ձմեռ պապիկը փոքրիկ տղային հայոց սրբազան գրերն էր նվեր բերել, որոնց նա վերաբերվում էր սուրբ երկյուղածությամբ, անչափ մեծ զգուշությամբ ու բացառիկ խնամքով: Հավելեմ նաև, որ տղան Ձմեռ պապիկին Ամանորի նախօրեին վերոհիշյալ խնդրանքով գիր էր ուղարկել:

Չարանենգ թուրքի արյունոտ սրին հակադրված հրաշք վահանն է մեր այբուբենը, որը հավետ անսասան կպահի հայոց աշխարհը: Ինչքան էլ մութ ամպերը պատեն հայոց երկնակամարը, ինչքան էլ խորամանկ ու խարդախ ոսոխը սպառնա, միևնույն է, հույսի ու լույսի արշալույս է ծագելու, արցախական աշխարհի անդորրը ոչինչ և ոչ ոք չի խաթարելու: Հենց այսօրվա գրապաշտ ու հայրենապաշտ սերունդն է հայկազունյաց շառավիղը փրկելու, վաղվա հույսն ու իսկական ապավենը: Նա, անշուշտ, նվաճել է խաղաղ պայմաններում ապրելու և արարելու իրավունքը (վկան՝ 2014 թվականի օգոստոսի հերոսական դեպքը):

Կամոքն Աստծո՝ թող խաղաղություն տիրի հայոց աշխարհում, և հավերժ թո՛ղ ղողանջի Հայոց հավատքի զանգը:

**Ռիմա ՄԵԼՔՈՒՄՅԱՆ**
**Ստեփ. հ.6 հիմն. դպրոցի հայոց լ. եւ գրակ. մեթոդմասնախմբի ղեկավար**

## ՅՈՒՅԱԴՐՈՒՄ ԵՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայոց բանակի օրվան նվիրված՝ Քաշաթաղի շրջկենտրոն Բերձորի Վահան Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցում անցկացվեց մրցույթ՝ Կալաշնիկով ինքնաձիգի ոչ լրիվ քանդման-հավաքման և վարժասարքից կրակելու: Մասնակցում էին քաղաքում գործող 2 հանրակրթական դպրոցների 8-11-րդ դասարանների տղաները՝ յուրաքանչյուր թիմում 5 մասնակից: Համար 1 միջնակարգի զինղեկ Սամվել Պապիկյանի հրահանգով մասնակիցները նախ շարք կանգնեցին, լսեցին մրցույթի պայմանները: Սկզբում կայացավ ինքնաձիգի քանդում-հավաքումը: Լավագույն արդյունք՝ 48 վայրկյան, ցուցաբերեց Բերձորի Վահան Զատիկյանի անվան հ. 2 միջնակարգի 8-րդ դասարանի աշակերտ Տիգրան Մատինյանը: Երկրորդը՝ 53 վրկ միավորով, հ. 1 միջնակարգից Գրիգոր Մկրտչյանն էր, նույն դպրոցից Գոռ Սարգսյանը երրորդն էր՝ 55 վայրկյան արդյունքով: Արդեն երրորդ տարին է, ինչ գեներալ-լեյտենանտ Մուրազ Սարգսյանի օժանդակությամբ հ. 1 միջնակարգ դպրոցում գործում է կրակային վարժասարքը, որից օգտվում են նաև այլ կրթօջախների սաներ: Մրցույթի երկրորդ մասը վարժասարքից կրակելն էր: Նախատեսված էր 10 կրակոց ուսուցողական և 10-ը՝ մրցութային: Այս մրցույթում 86 միավորով (գերազանց գնահատական) աչքի ընկավ հ. 1-ի 11-րդ դասարանի աշակերտ Վլադիմիր Սարգսյանը: Երկրորդը՝ 84 միավորով, երկրորդ դպրոցից Մոնթե Գևորգյանն էր: Կրակայինից ընդհանուր միավորներով հաղթող ճանաչվեց հ. 1 դպրոցի թիմը՝ 336 միավորով: Երկրորդ դպրոցի թիմը հավաքեց 295 միավոր: Ինքնաձիգի ոչ լրիվ քանդում-հավաքումից հաղթող ճանաչվեց հ. 2 դպրոցի թիմը (6 րոպե 30 վայրկյան):

Մրցույթին ներկա էին առաջին դպրոցի տնօրեն Անահիտ Քոսակյանը, փոխտնօրենները, երկրորդ դպրոցի զինղեկ Գևորգ Ալեքսանյանը:

-Զինվորական ծառայության անցնելուց առաջ կարևոր է, որ բարձր դասարանների տղաները կարողանան դիպուկ կրակել, ծանոթ լինեն ինքնաձիգին,- ասաց մրցույթի կազմակերպիչ Սամվել Պապիկյանը՝ նշելով, որ կա նպատակ նույն մրցույթին մասնակից դարձնել նաև այլ դպրոցների աշակերտների:

**Զ. ԲՈՔՈՅԱՆ**

## ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Հունվարի 16-18-ը ՀՀ պաշտպանության նախարարության վարչական նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Աճող սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» թեմայով համաժողով, որին մասնակցում էին տարբեր գերատեսչությունների, հասարակական կազմակերպությունների ղեկավարներ, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ: Մասնակցում էր նաև ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը, որի կազմում ընդգրկված էին նախարարության պատասխանատու աշխատողներ, Ստեփանակերտի և շրջանների դպրոցների մանկավարժներ: Համաժողովին ներկա էր ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը:

Համաժողովում բացման խոսքով հանդես է եկել ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը: Նա կարևորել է Հայաստանի նորագույն պատմության, ինչպես նաև Արցախյան պատերազմի ընթացքում ձեռքբերումներն աճող սերնդին պատշաճ կերպով փոխանցելու անհրաժեշտությունը, քանի որ միայն այդկերպ կարելի է ապահովել երկրի հետագա զարգացումը: Համաժողովում ամփոփվել են հայրենասիրական դաստիարակության ոլորտում 2014թ. պաշտպանական գերատեսչության կողմից իրականացված միջոցառումները, քննարկվել ազգային ինքնության և հպարտության զգացումով համակված սերնդի դաստիարակման ուղիներն ու միջոցները:

Զեկուցումներով հանդես են եկել հայրենասիրական դաստիարակության ոլորտում ընդգրկված տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչները: «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աճող սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» զեկուցումով հանդես է եկել ԼՂՀ կրթության և գիտության նախարարության ԿԳ վարչության պետ Ռայա Մուսայելյանը (տե՛ս էջ 2):

Համաժողովի ավարտին հայրենասիրական դաստիարակության բնագավառում ներդրած ավանդի համար մի շարք գերատեսչությունների ներկայացուցիչներ պարգևատրվել են գերատեսչական մեդալներով և պատվոգրերով, այդ թվում՝ Արցախի կրթության համակարգի պատվիրակության անդամները. Ռայա Մուսայելյանը (ԼՂՀ կրթության և գիտության նախարարության ԿԳ վարչության պետ)՝ ՀՀ ԿԳ նախարարության պատվոգրով, Անահիտ Պողոսյանը (Ստեփանակերտի հ. 7 հիմնական դպրոցի տնօրեն)՝ ՀՀ ՊՆ պատվոգրով, Վալերի Գրիգորյանը (ԼՂՀ ԿԳՆ ռազմահայրենասիրական դաստիարակության բաժնի պետ)՝ ՀՀ սպորտի նախարարության շնորհակալագրով, Մարտին Սարգսյանը (Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ դպրոցի զինղեկ)՝ ՀՀ տարածքային և արտակարգ իրավիճակների նախարարության մեդալով, Արմեն Սողոմոնյանը (Ստեփանակերտի հ. 2 միջնակարգ դպրոցի զինղեկ)՝ ՀՀ տարածքային և արտակարգ իրավիճակների նախարարության մեդալով, Արթուր Աթանեսյանը (ԼՂՀ ԿԳՆ ռազմահայրենասիրական դաստիարակության բաժնի գլխավոր մասնագետ, Ստեփանակերտի հ.3 միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ)՝ ՀՀ մշակույթի նախարարության պատվոգրով, Լուսինե Մնացականյանը (Մարտակերտի շրջանի Առաջածորի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի)՝ ՀՀ ԿԳՆ պատվոգրով, Սեդա Թովմասյանը (Ասկերանի շրջանի Ակնաղբյուրի միջնակարգ դպրոցի պատմության ուսուցչուհի)՝ «Դրաստամատ Կանայան» ՊՆ մեդալով, Լյուբա Մայիլյանը (Հադրութի միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի)՝ ՀՀ սփյուռքի նախարարության «Մայրենիի դեսպան» մեդալով: Հայտարարվեց, որ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայից 2013 և 2014թթ. դպրոցականների օլիմպիադայի ՀՀ հանրապետական փուլում հաղթած Արցախի թիմի մարզիչներ, Ստեփանակերտի հ. 5 և հ. 10 հիմնական դպրոցների զինղեկներ Արսեն Հարությունյանը և Վարուժան Աղաջանյանը պարգևատրվել են ՀՀ ՊՆ «Անդրանիկ Օզանյան» և «Վազգեն Սարգսյան» մեդալներով:

ՀԱՄԱԺՈՂՈՎ

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՃՈՂ ՍԵՐՆԴԻ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հարգարժան նախարարներ, պարոնայք գեներալներ և սպաներ, համաժողովի մասնակիցներ

Ողջունում եմ ձեզ ուսումնական հաստատություններում աճող սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրները կարևորելու, դրանց լուծման նպատակով հրավիրված համաժողովի աշխատանքները սկսելու կապակցությամբ և ցանկանում եմ բեղմնավոր ընթացք ու մեր երախտագիտությունն եմ հայտնում համաժողովի կազմակերպիչներին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հանձնախմբին նույնպես հրավիրելու համար:

Համաժողովի հարգարժան մասնակիցներ, Արցախի ուսումնական հաստատություններում ռազմահայրենասիրական դաստիարակությանը միտված աշխատանքներն ընթանում են հայրենիքի նկատմամբ սիրո և հավատարմության, նրա հզորացման ու բարգավաճման, անկախության ամրապնդման և Մայր հայրենիքի հետ սերտ համագործակցության և, որ ամենակարևորն է, ազգային անվտանգության ապահովման երաշխիք Հայոց բանակի մարտունակության բարձրացման ուղղությամբ:

Ահավասիկ, բանակի կայացման ու հզորացման գործի հիմքում ընկած է պատանիներին զինծառայությանը հոգեբանորեն պատրաստելու, զինվորական ծառայության նկատմամբ նախնական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու, բանակում ծառայելու հանդեպ դրական վերաբերմունք ձևավորելու ուղիների փնտրման անհրաժեշտությունը: Ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրները լուծելու համար ամեն ինչ պետք է սկսել աճող սերնդի մեջ խորը հայրենասիրության ու զորեղ կամքի դաստիարակումից:

Հայ Ժողովրդի պատմության տարբեր ժամանակահատվածներում իր պետականության և ինքնագոյության համար մղված ազատագրական պայքարի դասերը լավագույն օրինակ են: Հայրենասիրության դասերի սակավություն երբեք հայը չի զգացել, ներկա սերնդի հայրենասիրական դաստիարակության համար և մեր մանկավարժների գործունեության հիմքում հենց այդ դասերի, նախորդ սերունդներից մեզ փոխանցված պատմամշակութային և հոգևոր հարուստ ժառանգության փոխանցումն է նոր սերնդին, որի պահպանման ու դրանց նկատմամբ ինքնագիտակցման ու արժևորման դրսևորումները յուրաքանչյուրիս սուրբ պարտավորությունն են: Հայը, առավել ևս արցախցին, լավ է սերտել և՛ պատմության դասերը, և՛ Արամ Մանուկյանի հետևյալ խոսքերը. «Հայը ուրիշ ոչ մի ազգի առաջ գլխարկ հանելու պետքը չունի, քանզի նա իր հայրենիքի, իր հող ու ջրի տերն է եղել միշտ»:

Հայրենասիրական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքները հիմնականում ընթանում են ուսումնական հաստատություններում ուսուցանվող առարկայական պարապմունքների և արտաուսումնական միջոցառումների միջոցով: Կարևորելով ռազմահայրենասիրական դաստիարակության առաջնայնությունը՝ մեր հանրապետության կրթական հաստատություններում լավ են գիտակցում, որ այսօրվա դպրոցականը վաղվա զինվորն է, և բոլոր հնարավորություններն օգտագործում են այդ սրբազան գործին նրանց նախապատրաստելու համար: Բացի ռազմամարզական ծրագրային միջոցառումներից՝ պատանիների վրա մեծ ազդեցություն է ունենում այն հանգամանքը, որ շատ դպրոցների զինղեկներ Արցախյան գոյամարտի մասնակից սպաներ են, շատերի ծնողները այսօրվա մեր ազատ ապրելու իրավունքը կերտողներն են, շատ գեներալներ մեր երեկվա մանկավարժներն են: Նրանց աչքերում հպարտություն ենք նկատում, երբ Արցախյան գոյապայքարում զոհված ազատամարտիկներին նվիրված հուշ-ցերեկույթների, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային հերոսների ծննդյան տարեդարձների, Մեծ հայրենականի և Արցախյան պատերազմի մասնակիցների հետ հանդիպումների, Մայիսյան եռատոնի, Արցախի անկախության և այլ հիշարժան օրերին նվիրված միջոցառումների ընթացքում մեր դպրոցականները հանդիպում են արցախյան բանակի բարձրաստիճան հրամանատարներին ու գեներալներին, լսում նրանց հայրենասիրություն, ազգապաշտություն, հայրենիքին նվիրվելու պատրաստակամություն ներշնչող խոսքերը:

Զգալով ռազմահայրենասիրական դաստիարակության բնագավառի արդի խնդիրների լուծման հրատապությունը՝ ԼՂՀ կրթության և գիտության ու պաշտպանության նախարարությունների համագործակցության շրջանակներում արդյունավետորեն են իրականացվում բանակ-դպրոց համատեղ միջոցառումները՝ ուղղված սովորողների նախազորակոչային պատրաստության ու այդ նպատակով ուսումնական հաստատությունների նյութական բազայի համալրման, զինղեկների վերապատրաստման, ուսումնական հաստատություններում ռազմահայրենասիրական աշխատանքների դրվածքի համատեղ ուսումնասիրման և մեթոդական աջակցության ցուցաբերման, «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրային ապահովման, հատկապես սովորողների կրակային պատրաստության ու դաշտային պարապմունքների իրականացման գործընթացներին:

Զորամասեր կատարվող այցելությունների ընթացքում սովորողները ծանոթանում են զորամասի անցած մարտական ուղուն, լինում են նրա ստորաբաժանումներում, ծանոթանում են մարտական տեխնիկային, զինվորների նիստուկացին, կազմակերպվում են համատեղ հանդիպումներ, համերգային ծրագրեր և այլ բնույթի միջոցառումներ:

Սովորողների նախազորակոչային պատրաստության ապահովման գործընթացում կարևոր դեր է կատարում դպրոցականների ավանդական դարձած «Արծվիկ» ռազմամարզական խաղի անցկացումը, որը յուրատեսակ ստուգատես է մասնակից թիմերի կողմից ռազմամարզական, շարային, քաղաքաշտպանության, առաջին բուժօգնության և կրակային պատրաստության կարողությունների դրսևորման համար, ինչպես նաև բանակ-դպրոց արդյունավետ կապի վառ օրինակ: Այն անցկացվում է ԼՂՀ կրթության և գիտության նախարարության, պաշտպանության բանակի և արտակարգ իրավիճակների պետական ծառայության համատեղ ջանքերով:

Սովորողների նախազորակոչային պատրաստության գործընթացում կարևոր նշանակություն ունեն հանրապետական ուսումնական հաստատությունների 9–12-րդ դասարանների սովորողների միջև անցկացվող առարկայական օլիմպիադաները, այդ թվում՝ «Նախնական զինվորական պատրաստություն»-ից: 2013, 2014 թվականներին ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հաղթող թիմերը մասնակցեցին ՀՀ-ում անցկացված օլիմպիադայի հանրապետական փուլին և թիմային հաշվարկով գրավեցին 1-ին պատվավոր տեղը՝ արժանանալով գլխավոր մրցանակի:

Արտաուսումնական միջոցառումների շարքում առանձնահատուկ նշանակություն ունի ռազմամարզական ճամբարային առօրյայի կազմակերպումը: Պաշտպանության բանակի և ԼՂՀ ԿԱ առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայության աջակցությամբ արդեն 7-րդ տարին է՝ կազմակերպվում է «Ասպետ» ռազմամարզական ճամբարը, որտեղ իրենց հանգիստն են վայելում հանրակրթական հաստատությունների 11-րդ դասարանների շուրջ 600 պատանիներ, այդ թվում՝ Լիբանանի, Սիրիայի, Իրանի Իսլամական Հանրապետության, Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի և այլ հաստատությունների պատանիներ: Նման կազմով ճամբարականների առօրյան անցնում է հետաքրքիր ու փոխըմբռնման մթնոլորտում, ճամբարականների հանգիստը զուգորդվում է բանակային կառուցվածքային ու կարգապահական կանոններին համապատասխան պարապմունքներով, ինչը նպաստում է ՆԶՊ-ից ստացած նրանց գիտելիքների հարստացմանն ու մարտական կարողությունների զարգացմանը:

Գիտակցելով, որ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդման արդյունավետության բարձրացումը և ռազմահայրենասիրական դաստիարակության արդի խնդիրների լուծումը հիմնականում պայմանավորված են զինղեկների աշխատանքով՝ ԼՂՀ կրթության և գիտության ու պաշտպանության նախարարության հետ համատեղ միջոցներ են ձեռնարկվում զինղեկների շարքերի համալրման, նրանց հետ ամենամյա վերապատրաստման դասընթացների կազմակերպման ուղղությամբ:

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդման դրվածքի բարելավման նպատակով կարևորում եմ նաև կրթության և գիտության նախարարության կողմից կազմակերպվող «Տարվա լավագույն զինղեկ» մրցույթի անցկացումը, որի արդյունքում, մրցույթում հաղթողներից բացի, «Ռազմահայրենասիրական դաստիարակության լավագույն դրվածքի», «Աշակերտների մոտ առարկայի նկատմամբ սեր ու հետաքրքրություն առաջացնելու» և այլ անվանակարգերում հաղթողները նույնպես խրախուսվում են նախարարության կողմից:

Հանրապետության կրթության, գիտության և պաշտպանության նախարարությունների ռազմահայրենասիրական դաստիարակության համանուն բաժինների համատեղ աշխատանքը, համաձայն որի ուսումնական տարում պլանավորվում և կազմակերպվում են թեմատիկ ստուգումներ ու բաց դասեր, բացահայտվում են թերություններն ու բացթողումները, քննարկվում են բաց դասերը, ցուցաբերվում են անհրաժեշտ մեթոդական օգնություն, նույնպես տալիս են դրական արդյունք:

Կարճ ժամանակամիջոցում տիրապետել ժամանակակից զենքին և դառնալ հայրենիքի պաշտպան՝ այնքան էլ դյուրին գործ չէ: Հետևաբար, յուրաքանչյուր պատանի պետք է նախօրոք իրեն նախապատրաստի զինվորական ծառայությանը, օժտված լինի ֆիզիկական, մտավոր և հոգևոր ներուժով, լինի բարոյական բարձր արժանիքների տեր, պատրաստ ծառայելու իր ժողովրդին և հայրենիքին:

Այս առումով առաջավոր դպրոցների զինվորական ղեկավարները նպատակաուղղված աշխատանք են տանում նախազորակոչիկներին դեպի ռազմական գործը կողմնորոշելու ուղղությամբ: Շրջանավարտներից շատերը սովորում են բարձրագույն ռազմական ուսումնական հաստատություններում:

Նորաստեղծ բանակի է՛լ ավելի հզորացման, ամրապնդման ու կատարելագործման ուղղությամբ կարևոր խնդիրներ են դրված հանրակրթական դպրոցի առջև, քանզի դպրոցում է ձևավորվում այն անձը, որը հետագայում դառնալու է հայրենիքի զինվորը, մարտիկը, սպան, բանակի ռազմական տեխնիկան օգտագործողն ու ղեկավարողը:

Հետևաբար, երիտասարդ սերնդի ռազմական ուսուցման գործի կազմակերպումը ռազմահայրենասիրական դաստիարակության կարևոր խնդիրներից է:

Անկասկած, ազգային բանակի կայացման կարևոր պայմաններից մեկը կիրթ և հատկապես տեխնիկական գրագիտություն ունեցող զինվորական ու սպայական անձնակազմ ունենալն է, որի ապահովումը պայմանավորված է այսօրվա հանրակրթության մակարդակով: Շատ օրինակներով կարելի է ցույց տալ, թե հանրապետության հանրակրթական դպրոցների մանկավարժական կոլեկտիվները որքան խրախուսելի գործ են կատարում այդ ուղղությամբ:

Վերջին տարիներին զգալիորեն փոփոխվել են ռազմագիտության ուսուցման բովանդակությունն ու նրա դասավանդման պահանջները: Ապագա զինվորի համար ապահովվում են նախնական գիտելիքներ ու կարողություններ, ինչն էլ հիմք է հանդիսանում նրա զինվորական պատրաստության և ռազմական մասնագիտության տիրապետման համար:

Պատանիներին զինվորական ծառայության նախապատրաստելու որակը բարձրացնելու նպատակով զինվորական ղեկավարների մեծամասնությունը ամուր կապ է պահպանում այն շրջանավարտների հետ, ովքեր ծառայում են ԼՂՀ պաշտպանության բանակում, սովորում ռազմական տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում :

Եվ այսօր բոլոր նրանք, ովքեր աշխատում են երիտասարդության հետ, գիտեն, որ նոր սերնդին զինվորական ծառայությանը նախապատրաստելու խնդիրը միայն ռազմագիտության դասերին լուծել հնարավոր չէ: Անհրաժեշտ է կիրառել ռազմահայրենասիրական դաստիարակության բոլոր ձևերը, ապահովել համալիր մոտեցում այդ կարևոր խնդրին:

Ընդհանրացնելով մեր ձեռքբերումները՝ վստահաբար կարող եմ ասել, որ հանրապետության ուսումնական հաստատություններում ռազմահայրենասիրական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստության ուսուցման գործընթացը գտնվում է բավարար հիմքերի վրա, բայց մենք չենք բավարարվում ձեռքբերածով և կարծում ենք, որ դեռևս անելիքներ ունենք այս ոլորտում, որի համար առաջարկում ենք.

1. համալրել բոլոր կրթական հաստատությունների ուսումնական բազան, ստեղծել ռազմագիտության կաբինետներ, զենքի պահպանման սենյակներ, զինասենյակներ և դրանց կահավորումը համապատասխանեցնել արդի պահանջներին.

2. ուսումնական հաստատություններում ստեղծել հայ ժողովրդի պատմական անցյալի հերոսական դրվագներին և մեր ազգային ավանդույթներին նվիրված մարտական փառքի սրահներ և անկյուններ: Ավելի հաճախակի դարձնել շեֆ զորամասերի զինծառայողների և նրանց ծնողների հետ հանդիպումները.

3. կազմակերպել ռազմահայրենասիրական դաստիարակության բարձրացմանը նպաստող գիտական և գեղարվեստական հրապարակումներ ու գրքերի քննարկումներ.

4. Պաշտպանության բանակի հետ համատեղ հաճախակի կազմակերպել ռազմահայրենասիրական թեմաներով աշակերտական-համաբանակային հանրապետական մրցույթներ.

5. Ուսուցչի օրվա կապակցությամբ կազմակերպել բարեխիղճ ծառայությամբ աչքի ընկած և հայրենիքին ծառայելու բարձր պատրաստականություն ցուցաբերած զինծառայողների և ուսուցիչների հանդիպումներ.

6. սովորողների հետ մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքներն էլ ավելի ակտիվացնել՝ ռազմական ուսումնարաններ ընդունվելու և Հայոց բանակում որպես սպա ծառայելու նպատակով.

7. յուրաքանչյուր ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական գործունեության կարևոր խնդիր համարել ապագա զինվորի անձի ձևավորման և բանակում ծառայելու պատրաստակամության ապահովումը:

Համաժողովի հարգարժան ներկաներ, ռազմահայրենասիրական դաստիարակության որակի բարձրացման կոչը բնավ չի նշանակում, որ մեր նպատակը ռազմատենչ զինվոր դաստիարակելն է, բայց քանի որ, մեղմ ասած, վատ, անկիրթ թշնամի է մեզ բաժին հասել, որն ունենալով հազիվ մեկդարյա պատմություն, դեռևս դուրս չի եկել «քարանձավային քաղաքակրթության» սահմաններից և միայն կացնահարել, անմեղ, անչափահաս երեխային մորթել գիտի և մարդու իրավունքներն ու ազատություններն արյան մեջ խեղդելու, դեպքերը խեղաթյուրելու, սադրիչ հայտարարություններ անելու, իրավիճակը սահմաններում ապակայունացնելու և դիվերսիոն հարձակումներն ակտիվացնելու մեծ փորձ է ձեռք բերում, ուստի, մենք մեր զինվորին դաստիարակում ենք նաև թշնամուն դիմակայելու ու մեր սահմանները անխախտ պահելու պատրաստակամությամբ:

Ավելի քան համոզված եմ, որ մեր հակառակորդը բազմիցս արդեն համոզվել է, որ անհրաժեշտության դեպքում մենք ազգովի կպաշտպանենք մեր հող հայրենին՝ քանզի լավ ենք սերտել Տիգրան Մեծի այս պատգամը՝ «Մենք չենք թողնի, որ հայոց պարանի վրա օտարներն իրենց լվացքը փռեն»:

**Ռ. ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ**
**ԼՂՀ ԿԳ նախարարության կրթության եւ գիտության վարչության պետ**

ԸՆԹԱՑՔ

# ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հունվարի 27-ին Բերձորում՝ շրջվարչակազմի դահլիճում, շրջանի հանրակրթական դպրոցների տնօրենների մասնակցությամբ տեղի ունեցավ խորհրդակցություն՝ նվիրված 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակում կատարվելիք աշխատանքներին: Խորհրդակցությանը ներկա էին շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Արտուշ Մխիթարյանը և աշխատակազմի ղեկավար Դավիթ Դավթյանը: Ա. Մխիթարյանը տեղեկացրեց, որ հունվարից կրթության համակարգում տեղի ունեցած բարեփոխումների հետ կապված՝ կրթության բաժնի վարիչի տեղակալ Հովհաննես Սահակյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից և նշանակվել նորաստեղծ ՊՈԱԿ-ների տնօրեն: Կրթության բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանն անդրադարձավ 9-րդ և 12-րդ դասարանների ավարտական և միասնական քննությունների հայտերի ներկայացման գործընթացին: Հորդորեց ժամանակին ներկայացնել դրանք և աշխատանք տանել շրջա-

նավարտների հետ՝ ճիշտ ընտրություն կատարել ուսումնական հաստատություններ ընդունվելու համար: Հաջորդ հարցը նվիրված էր դպրոցական առարկայական օլիմպիադաների մասնակցությանը: Կարևորվեց, որ լավ պատրաստված աշակերտները մասնակցեն շրջանային փուլին: Ուրախությամբ նշվեց, որ «Կենգուրու» և «Մեղու» մրցույթներում շրջանի աշակերտներն ունեցել են ակտիվ մասնակցություն, արժանացել մրցանակների: Բաժնի վարիչը տնօրենների ուշադրությանը ներկայացրեց կրթության և գիտության նախարարությունից ստացված նոր հրահանգները՝ կապված կիսամյակում կատարվելիք աշխատանքների հետ: Անդրադարձ եղավ քաղաքաշտպանության առարկայի ուսուցմանը: Այս և այլ խնդիրների հետ կապված՝ ներկաները հարցեր ուղղեցին շրջվարչակազմի ղեկավարի տեղակալին, կրթության բաժնի վարիչին: Կարևորվեցին նաև դպրոցների ջեռուցման խնդիրը, հեռախոսակապը, կարգապահությունը, այլ հարցեր, որոնց վերաբերյալ դարձյալ քննարկումներ եղան: Շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Ա. Մխիթարյանը շնորհակալություն հայտնեց ուսուցչական կազմին՝ մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում ունեցած ավանդի համար՝ խնդրելով և հորդորելով անել ավելին՝ հայրենիքին պիտանի սերունդ տալու համար:

**Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ**

*Կարծիք*

# ԼԻՆԵՆՔ ԻՐԱՏԵՍ

Արցախի հանրային հեռուստատեսությունը հաճախակի եթեր է արձակում հանրապետության դպրոցներում թափուր պաշտոնների, ազատ դասաժամերի մասին հայտարարություններ: «Լուսարար» թերթն էլ իր հերթին է անդրադառնում այդ հարցին: Եթե առաջ հիմնականում Քաշաթաղի, Շահումյանի շրջանի դպրոցներում էր ուսուցչի կարիք զգացվում, այսօր Մարտակերտի, Մարտունու շրջանի շատ դպրոցներ նույնպես ուսուցիչներ են «փնտրում»: Միայն ըստ թերթի 2014թ. 32 համարի Մարտունու շրջանի 14 դպրոցներում տարբեր մասնագիտության ուսուցիչների թափուր տեղեր կան: Բայց իմ ուշադրությունը գրավել էր մրցույթի ենթակա ժամաքանակի դիմաց փակագծերում գրված «կրկնակի» բառը: Իսկ դա միանգամայն պարզ է. դպրոցի մեկ ամսվա «փնտրտուքները» արդյունք չեն տվել, և ահա՝ կրկնակի հայտարարություն և, ցավոք, ոչ հատուկենտ դպրոցներում:

Մի՞թե ուսուցչի երբեմնի պատվաբեր աշխատանքը աստիճանաբար դառնում է անհրապուրելի, գուցե ուսուցիչը այլևս հեղինակությո՞ւն չէ(կար ժամանակ, որ մատով էին ցույց տալիս), իսկ գուցե «խղճուկ» ժամաքանակի դիմաց նրան ներկայացվող պահանջները, որը թղթերի մի ամբողջ կապոց է հիշեցնում, լրացուցիչ հոգսերի տեղի՞ք է տալիս: Իսկ աշխատավա՞րձը (որ պակաս խթանիչ գործոն չէ). այն երկար ժամանակ դիտվում էր իբր «շատ» բարձր աշխատավարձ (դիտարկվում էր առանց ուսուցչի ծանրաբեռնվածությունը հաշվի առնելու, իսկ այն տարիներ շարունակ տատանվում էր 12-14ժամ, մեր՝ Մարտունու շրջանում ընթացիկ ուսումնական տարում՝ 0.6դրույք): Եթե նշածներիս մեջ կան ճշմարտության հատիկներ, ուրեմն օրինաչափ է, որ ուսուցիչների պակասը իրեն զգալ տա (սրան նպաստում է նաև «առանց ծանր ու թեթև անելու» ուսուցիչների թոշակի ուղարկելը):

Թվում է, թե մոռացության է տրված մի պարզ ճշմարտություն. այն է՝ ամենաթանկ կապիտալի ապագան ուսուցչի ձեռքում է:

Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններն ամեն տարի բավականին շրջանավարտներ են թողարկում, և թվում է, թե պահանջարկ «ուսուցչի շուկայում» չպիտի որ լինի: Այնինչ հանրապետությունում ուսուցչի շուրջ 400 տեղ կա ազատ: Ստացվում է, որ ուսուցիչների որոշ մասը խուսափում է մանկավարժական աշխատանքից: Ճիշտ է, ԼՂՀ կառավարության որոշմամբ գյուղական բնակավայրեր գործուղված ուսուցիչներին տրվում է լրավճար դրույքի կեսի չափ և 20 հազար դրամ բնակարանի վարձ, բայց, ըստ երևույթին, սա այն ձգողական ուժը չէ, որ հրապուրի երիտասարդ շրջանավարտներին: Կառավարության այս քաղաքականությունը, իրավ, արժանի է գովեստի: Իրոք որ, նոր բնակավայրերի կառուցումը, անմշակ հողերի յուրացումը, վերաբնակեցման քաղաքականությունը հպարտանալու առիթներ են տալիս: Սակայն տարակուսանքի տեղիք է տալիս նաև այն փաստը, որ հանրապետության շատ հին բնակավայրեր «հոգեվարքի» մեջ են. ծերացող բնակչություն, անընդհատ նվազող աշակերտներով դպրոցներ: Նույն վիճակի մեջ են մեր շրջանի Ավդուռ, Մյուրիշեն, Հացի, Եմիշճան, Պառավաթումբ, Հաղորտի և էլի տասնյակ գյուղեր: Եվ հանկարծ հայտարարություն՝ նման գյուղերի դպրոցներում 7-8 ժամի համար մրցույթի մասին: Եկեք իրականությանը նայենք սթափ դատողությամբ. հազիվ թե գտնվի մեկը, որ այդ «կորած» գյուղում 7-8 ժամի համար ստիպված լինի 100-150 հարցի պատասխան սովորել և երկու փուլով էլ(գրավոր և բանավոր) մրցույթին մասնակցել: Ելնելով այսօր գործող օրենքից, ըստ որի առանց մրցույթի աշխատանք չկա, շատ անգամ փոքր դպրոցների համար վարում ենք ոչ ճիշտ ռազմավարություն: Լավագույն դեպքում այդ դպրոցներում աշխատելու համար մեկ դիմորդ լինի, թե՝ ոչ: Մեկ դիմորդի դեպքում էլ ի հայտ է գալիս մրցույթի ևս մի թերի կողմ: Ի՞նչ մրցույթ, երբ մրցակիցներ չկան: Այստեղ, անկասկած, կգործի «Ցորեն հաց չկա տանք հիվանդը կազդուրվի, գարի հաց է՞լ չտանք» (ըստ Մուրացանի) սկզբունքը:

Սխալված չեմ լինի, որ պնդեմ՝ ուսուցիչը որպես բարձրագույն ուսումնական հաստատություն ավարտած մարդ՝ առանձնահատուկ ուշադրության չի արժանանում: Միայն ավագ սերնդի մարդիկ են երանությամբ հիշում իրենց ուսուցիչներին. չէ՞ որ ուսուցչի հեղինակությունը հաճախ պաշտամունքի էր հասնում: Ի՞նչ եք կարծում, այսօր բուհական կրթություն ունեցողը մտավորականների այն խա՞վն է, որ իրավամբ կոչվում է ազգի սերուցք: Բնավ՝ ո՛չ: Ինչո՞ւ, որովհետև համարյա չավարտածների խավ գոյություն չունի:

Ակամայից հիշեցի անցյալ դարի 80-ականների սկզբի դպրոցական ռեֆորմը, որն առաջ էր քաշել համակողմանի զարգացած անհատ ձևավորելու հարցը: Այո՛, դպրոցին անհրաժեշտ է հենց համակողմանի զարգացած անհատ: Իսկ համակողմանի զարգացած լինել նախ և առաջ պետք է հասկանալ անհրաժեշտ ինտելեկտ՝ գումարած ազգային բնավորություն: Ասել է թե՝ բոլոր առումներով ուժեղ սերունդ է հարկավոր, ազգային ավանդույթն իմացող, ազգային մշակույթը հարգող և զարգացնող, ազգային մտածողությամբ, ազգային հպարտությունը գիտակցող սերունդ, որ լավ է իմանում մեր անցած ուղին, կարողանում է ըմբռնել ներկան և, ինչու չէ, կանխատեսել ապագան:

Բուհում հարակից առարկաների տարանջատումը բնավ էլ չի տանում համակողմանի զարգացած անհատի ձևավորմանը, դեռ ավելին, հանգեցնում է նեղ կաղապարավորման:

Այսօր մեր բուհերի շատ շրջանավարտների դիպլոմներում որպես երկրորդ ասեմ, թե լրացուցիչ մասնագիտություն գրված է՝ ուսուցիչ(մաթեմատիկոս-ուսուցիչ, պատմաբան ուսուցիչ, աշխարհագետ-ուսուցիչ, բնագետ- բնապահպան- ուսուցիչ), և ցավալի է, որ «ուսուցիչը» միշտ երկրորդ պլանում է:

Նախ շատ ավել լավ կլիներ ունենալ մանկավարժական բուհ, որի առաքելությունը կլիներ թողարկել արդի կրթական բարեփոխումներին համահունչ մանկավարժներ:

Ի՞նչ եք կարծում, բուհերի բոլոր շրջանավարտները պատրա՞ստ են կամ ի վիճակի՞ են ուսուցիչ աշխատել: Կարծում եմ՝ վատ չէր լինի, որ հենց առաջին կուրսից սկսվեր ուսանողի բնութագրում (ինչպես դպրոցներում), և կուրսից կուրս բնութագրելով ուսանողին՝ պարզ կդառնա, արդյոք, պատրա՞ստ է վերջինս դառնալ ուսուցիչ, բնութագրում նշվի, թե ինչպես է սովորում, նվիրվա՞ծ է իր ապագա մասնագիտությանը, բարեխի՞ղճ է, պարտաճանա՞չ, պատրա՞ստ է գործուղվել այնտեղ, որտեղ կզգացվի իր պահանջը, լրջորե՞ն է զբաղվում ինքնակրթությամբ, ուսումնասիրու՞մ է լրացուցիչ մասնագիտական գրականություն, աշխարհաճանաչողությունը, վերջապես, մարդկային գործոնը զարգանո՞ւմ է, ունի՞ ազգային հպարտություն, ազգային մտածողություն, ունի՞ հարգալից վերաբերմունք ընկեր-ուսանողների, դասախոսական կազմի հետ...:

Շատ հարցեր պետք է փորձել լուծել՝ ելնելով զուտ ազգային պետական շահերից, մեր ժամանակներց, պահանջներից, պետական իրավիճակից (չպետք է շտապել արևմուտքից ներմուծել այն, ինչի նախադրյալները դեռևս հասունացած չեն). ասել է թե՝ քանի դեռ տվյալ հիմնահարցի լուծման նախադրյալները չեն ստեղծվել, չպետք է շտապել «վերևից» լուծումներ պարտադրել:

# ԴԱՐՁ ԱԶԳԱՅԻՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԻՆ

Խորհրդային պետության փլուզումը մեծ հարված էր նաև մշակույթի զարգացմանը: «Ոգու սովը» իրեն զգալ էր տալիս ամենուր: Մեզ պարտադրված պատերազմը էլ ավելի շոշափելի դարձրեց հասարակության ոչ կամոք հեռացումը մշակույթից: Ոչ ոք չի կասկածի այն ճշմարտության մեջ, որ պատերազմը, հետպատերազմյան բազում հոգսերը մշակույթը թողել էին թանձր ստվերում: Ազգային, պետական շատ համույթներ դադարեցին գործելուց, սիրողական թատերական խմբերը, որ կային համարյա բոլոր գյուղերում և հասարակության սերն ու համակրանքն էին վայելում, մնացին որպես հուշ: Պատերազմից հետո ժառանգություն մնացին ստվերված, նաև թալանված մշակույթի օջախներ, գյուղական ակումբներ, անգործության մատնված մշակույթի բնագավառի աշխատողներ: Այս բոլորը ավելի էր խորացրել հասարակություն-մշակույթ վիհը: Ժամանակ առ ժամանակ կազմակերպվող ստուգատեսները միայն ու միայն «վարագույրի» դեր էին կատարում, իբր հետևում ինչ-որ բան կատարվում է:

Ուրախությամբ պիտի արձանագրել, որ վերջին ժամանակներս որոշակի աշխուժություն է նկատվում ոլորտում և որ ամենակարևորն է՝ փորձ է արվում մշակույթը «ոտքի հանել» նաև գյուղական բնակավայրերում: Վերջին հաշվով չի բացառվում այն փաստը, որ գյուղական բնակավայրերում էլ կարող են լինել «թաքնված տաղանդներ», և միայն կայծն է պակասում, որ այդ տաղանդները շողարձակվեն, գտնեն իրենց ճանապարհը, գիտակցեն իրենց մեջ անթեղված ընդունակությունները: Մենք ուրախությամբ ընդունեցինք այն լուրը, որ ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ընդառաջելով գյուղի ակումբի վարիչի հորդորանքին, պարուսույց է գործուղել (հոկտեմբերից) մեր՝ Եմիշճանի համայնք աշակերտներին( և ոչ միայն) ազգագրական պարեր սովորեցնելու:

Ես նախընտրեցի հանդիպել պարուսույց Անի Նարիմանյանին և զրուցել նրա հետ:

Նա ներկայացնում է երիտասարդ, նվիրյալ պարուսույց Սարգիս Պարսամյանի ղեկավարությամբ գործող «Արցախ» ազգագրական համույթը: Խումբը հարուստ պատմություն չունի, կարճ ժամանակ է, ինչ գործում է: Համույթը ստանձել է ազգանվեր առաքելություն՝ ազգագրական պարեր սովորեցնել Արցախի մանուկներին ու պատանիներին: Խմբի անդամները նման առաքելություն են իրականացնում շրջանի Ճարտար, Եմիշճան, Հադրութի շրջանի Տող, Ասկերանի շրջանի Նորագյուղ և հանրապետության այլ բնակավայրերում:

- Չնայած Եմիշճանը փոքր գյուղ է, մայրուղիներից հեռու, ունի ակնհայտ դժվարություններ, ես ինձ պատասխանատու եմ զգում շուրջ երկու տասնյակ երեխաների առաջ, որոնք լուրջ ակնկալիքներ ունեն,- զրույցի ժամանակ խոստովանեց Անին: - Հենց առաջին պահից երեխաները ինձ դուր եկան, նրանք ուշադիր են, կարգապահ, եռանդուն և չնայած դժվարությամբ են զուգորդում երաժշտությունը պարի շարժումների, տակտի, ռիթմի հետ, համոզված եմ, որ համատեղ ջանքերով հաջողության կհասնենք:

- Ի՞նչ եք կարծում, այս նախաձեռնությունը դա՞րձ է մեր ժողովրդական, ազգագրական արվեստի ակունքներին և օժանդակ փորձ հայեցի կրթության ու դաստիարակության գործում:

- Բնականաբար, Արևմուտքը այնպես թափով է ներխուժել մեր կյանքը,- հուզմունքը հազիվ զսպելով շարունակեց Անին,- և որ այսպես շարունակվի, ազգային մշակույթը, կենցաղը և ավանդույթները անկասկած կմնան ստվերում: Էլ չեմ ասում, որ հեռուստատեսությունը, համացանցը շատ էժանագին համերգներով ոչ արժեքավոր արվեստ են տարածում: Ու քանի դեռ գյուղական բնակչությունը շատ թե քիչ հեռու է եվրոպական ազդեցությունից՝ ինձ թվում է, որ առավել հեշտ կլինի ազգայինը տարածել, սովորեցնել, ազգային ինքնագիտակցության քուրան բորբոք պահել:

Սկսել ենք ուրախ, տրամադրություն բարձրացնող պարերից՝ «Թամզարա», «Գյովնդ վեր վերի» պարերի տարրերը յուրացնելուց, հետո ծրագրում են «Փափուրի», «Սասնա քոչարի» և այլ նույնպես ուրախ պարեր:

Անին միաժամանակ «Արցախակերտում» երիտասարդական հասարակական կազմակերպության անդամ է, որի հիմնական կարգախոսը՝ «Կերտենք Արցախը», հանրապետության բնակավայրերում երիտասարդների շրջանում ինչպես հասարակական ակտիվության, այնպես էլ ազգային մշակույթի զարգացումն է: Նրա վկայությամբ՝ կազմակերպության որոշ ծրագրեր գտնվում են ինչպես Մե նախարարության, այնպես էլ կառավարության ուշադրության կենտրոնում: Քիչ չեն դեպքերը, երբ ֆինանսական օժանդակություն է տրամադրվում: Բայց և այնպես, այս գործում մեծ տեղ է հատկացվում հասարակական կամավորական սկզբունքին:

Անիի նվիրումն ու եռանդը խոստումնալից ու հուսադրող են, իսկ որտեղ նվիրում, քրտնաջան աշխատանք, այնտեղ՝ հաջողություններ ու հաղթանակներ:

***Լևոն ԱՌԱՔԵԼՅԱՆ***
***գ.Եմիշճան***

ՆՎԻՐՅԱԼՆԵՐ

# «ՉԻՍ ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿ ՀԱՅ ԼԵԶՎԻՆ ԿՈՉԵ՛Ք...»

Հայերենը հայի խորհուրդն է, տեսակը ազդարարողը: Այն մեր արյան գույնն է, մեր զոհերի պատգամը, ապրողների սուրբ աղոթքն ու արարումը վեհ, առաջնագծում հսկող հայ զինվորի սիրտն ու զգոնությունը: Պատմական հայրենիքը կորցրած, Արցախյան գոյամարտում բազում զոհեր տված, բայց և հաղթանակած ժողովրդի համար չափազանց կարևոր է մայրենի լեզվի հանդեպ սերը, գուրգուրանքը, ծնրադրումը...

Ֆրանսիացի հայագետ, գիտնական Ֆրեդերիկ Ֆեյդը, ով վերին աստիճանի կիրթ ու հմայիչ մարդ էր, հիանալի խոսում էր հայերեն: Նա հայերենի մասին գրել է. «Հայոց լեզուն է իմ սիրուս առարկան... Մի լեզու, որ զորություն ունի ազատորեն և ստույգ արտահայտելու գիտական խստորոշ միտքը, փիլիսոփայական գաղափարները և բանաստեղծական նրբին, բազմերանգ պատկերները»:

Եթե մեր լեզուն այսպես կարող են գնահատել ու մեծարել այլազգի անհատները, որոնց համար այդ լեզուն օտար է, ապա որքա՜ն ավելի մենք պիտի գնահատենք, երբ այդ լեզուն մերն է, հարազատը, միակն ու անփոխարինելին...:

Այո՛, միակն ու անփոխարինելին: Չէ՞ որ անփոխարինելի են և՛ մայրը, և՛ հայրենիքը: Լեզուն մայրենի է: Ուրեմն, մարդ իր լեզուն պիտի սիրի, ինչպես իր մորն է սիրում: Իսկ սիրել՝ նշանակում է պահպանել, սովորել ու սովորեցնել: Մենք մեր ծնողներից ենք սովորում մեր խոսքի մշակույթը, պարտավոր ենք այն սրբությամբ փոխանցել մեր զավակներին: Լեզվի պահպանության գործում յուրաքանչյուր հայ անելիք ունի՝ ուսուցիչ, աշակերտ, ուսանող, գիտնական: Մարդ ձևավորելու գործում, մանավանդ մանուկ, պատանի, դեռահաս, կարևոր է, թե դաստիարակը ինչպես է խոսում, գործում, վերաբերվում մարդկանց: Մեծի, ավագ ընկերոջ, ծնողի խոսքը բալասան պիտի լինի, բուժի երեխայի հոգին, մղի, հասցնի, համոզի ու ստանա արժանի պատասխանը:

Գործի բերումով հաճախ եմ շփվում ծնողների հետ: Ծնողներ կան, որոնց հետ իմ հանդիպումը ուրախություն է, որովհետև նրանք գիտեն ուսման հարգը, կարողանում են օգնել ուսուցիչներին իրենց բարդ աշխատանքում: Նրանք իրենց անձնական օրինակով երեխաներին մղում են դեպի գիտելիքը, դեպի բարոյականը, վեհը, բարձրը: Մինչդեռ ծնողներ էլ կան, որոնք միայն բողոքել գիտեն իրենց երեխաներից: Մտածում ես՝ երբևէ նրանք փորձե՞լ են անկեղծ զրույցի բռնվել, իրենց երեխային պատմել իրենց իսկ մանկությունից, արտասանել նրանց համար, երգել: Անկասկած, ծնողի անտարբերությունը փոխանցվում է երեխային: Չկա գեղեցիկ խոսք, չկա քաղաքավարի դիմելաձև՝ անգրագիտությունը, կոպտությունն են դառնում խոսքի կշիռը: Մայրենիի սերմնացանների կողքին հայ մայրերը պիտի տեղ ունենան: Նրանք իրենց զավակների սրտերում անգին սերմեր պիտի շաղ տան, որ հետո վայելեն իբրև մրգեր քաղցրահամ: 87 տարեկան էր մայրս, երբ մահացավ: Կյանքի դաժան պայմանները թույլ չեն տվել, որ բարձրագույն կրթություն ստանա: Փոխարենը ընթերցանությունը դարձել էր նրա հաց ու ջրի մի մասը, գրքերը՝ հաճելի զրուցակիցներ: Նա կլանված ընթերցում էր հայ պատմավեպեր, դասական հայ հեղինակների բանաստեղծական գոհարներ: Անգիր էր սովորում դուր եկածները: Երբ հյուր էինք ունենում, հյուրասիրությունը վերածվում էր պոեզիայի երեկոյի: Դեռ ավելին՝ նա հորդորում էր մտերիմներին, բարեկամներին ընթերցել իր սիրած գրքերից:

Այնպիսի՜ սիրով, գորովով ու հպարտությամբ էր պատմում Պարույր Սևակի կենսագրական մանրամասնությունները: Իսկ «Քիչ ենք, բայց հայ ենք» բանաստեղծության արտասանությունը դառնում էր բողոք, դառնում էր ազնվության դաս, հույս ու հավատ:

Այո՛, մորս եմ պարտական մայրենիի նվիրյալ դառնալու համար:

Ընթերցանություն... Ահա այն զորավոր ուժը, որ մարդուն մղում է խոսքի բարձր մշակույթի: Գեղարվեստը, լինի արձակ թե չափածո, իր անասելի զորությամբ ու հմայքով գրավում է մեզ: Ու հաճախակի շփումը նրա հետ ճաշակ է հղկում, պարզում ասելիքը:

Խոսքի տիրապետման ամենալավ տարիքը մանուկ ու պատանի հասակն է, նույնիսկ ավելի շուտ մանուկ, քան պատանի հասակը: Երբեք չպիտի կարծել, թե նույն հաջողությամբ ձեռք կբերվի այն, ինչ բաց է թողնվել պատանեկան տարիներին: Եթե դու այդ հասակում չես հափշտակվել հայ արձակի լավագույն նմուշներով՝ «Սամվել», «Գևորգ Մարզպետունի», «Վարդանանք», եթե Վիլյամ Սարոյանը չի դարձել քո երազանքների բարի հսկան, եթե դու այդ հասակում չես կարդացել «Թոմ Սոյերը» կամ «Խորհրդավոր կղզին», հետո այդ գրքերից նույն բավականությունը չես ստանա:

Վերջին 2 տարվա ընթացքում, հուրախություն մեզ, մեր դպրոցի գրադարանը համալրվել է 31 անուն գեղարվեստական գրքերով՝ մեծամասամբ հայ դասական հեղինակների լավագույն ստեղծագործություններ: Ըմբռնելով այն կարևորությունը, որ լավագույն, կատարյալ գեղարվեստական գործը, որ վերլուծվում, ուսուցանվում է դպրոցում, ոչ միայն գրականության, այլև համընդհանուր զարգացման կարևորագույն դաս է՝ ծնողը ևս պետք է խթանի նրա ընթերցումը, յուրացումը, ոչ թե արգելի, իբրև թե խանգարում է դասերին:

Ճիշտ, գրագետ, արտահայտիչ խոսքի կարևորությունից ելնելով չէ՞, որ խորհուրդ է տալիս մեզ Հովհաննես Թումանյանը. «Խոսելիս կարգին կխոսեն՝ հանգիստ, շեշտով. մարդ իր խոսքին արժեք ու գին պիտի տա»:

Ընթերցողների ուշադրությունն եմ ուզում սևեռել լեզվական շեղումների վրա, որոնք արմատացել են, և հեշտ չի ընթանում դրանց դեմ տարվող պայքարը:

Նախ՝ շեշտի մասին: Հայերենի վերջնաշեշտությունից շեղումը նսեմացնում, գռեհկացնում է խոսքը, խեղում այն, հասցնում իմաստազրկման աստիճանի: Ահա՝ ***որպեսզի*** բառի սխալ հնչեղությունը զուգակցվում է բառի սխալ գործածության հետ և այն դառնում է ***որպիսի***:

Ուսուցման գործընթացում մենք՝ մանկավարժներս, շատ ենք հանդիպում աշակերտների սխալ շեշտադրման: Համակարգված աշխատանքը հաջողություն է բերում:

Մարդու տրամադրությունը բարև-ից է ծայր առնում, նույնիսկ՝ բարևելու ձևից: «Բարև», «Բարև ձեզ»: Եթե ճիշտ է շեշտված, դիմացինը դրանից հարգանք, գորով ու սեր է ստանում ու փորձում է ընդօրինակել շեշտը, որովհետև գեղեցիկ է, դուրեկան, նոր ու զարմանալի: Սխալ շեշտադրումը կորցնում է բարևի հմայքը, իմաստը, նպատակը: Եվ ողջույնի խոսքը դառնում է պարտադրվածություն՝ սրտի հետ չհամաձայնեցված: Որպես խորհուրդ՝ հանձնարարում եմ հայերեն սովորել ցանկացող ընթերցողներին Սևակի «Բարև» բանաստեղծությունը սովորել անգիր՝ չմոռանալով շեշտի մասին: Հեռուստացույցով, ռադիոյով, նաև կենդանի ելույթների ժամանակ հաճախ ենք լսում, որ հայ մարդը խոսում է և, ափսոս, չի կարողանում շրջանցել սխալ խոսքը, բառը, շարադրանքը: Ահա, փոխանակ ասելու ***կրկին***, որի մեջ ***անգամ*** բառը արդեն կա, լսում ենք՝ ***կրկին անգամ***, սա ***ամեն անգամ***-ը չէ: Որքա՜ն հաճախ ենք լսում՝ ***դա ձեզ չի վերաբերվում***: Վ-ն իմաստափոխում է բառը, և խոսքը սխալ է կառուցվում:

Ճիշտ բառը՝ ճիշտ տեղում. լեզվի այս օրենքից շեղումը լեզվական վթարների տեղիք է տալիս: Եթե արդեն նկատել եք, վաղուց ի վեր հարցերը կամ խնդիրները մեզանում դադարել են ***հարուցվել, արծարծվել, առաջ քաշվել, առաջ գալ, ծագել, ծառանալ,*** նույնիսկ ***դրվել***: Դրանք միայն և միայն ***բարձրացվում են***: Տգեղության, լեզվի խեղաթյուրման պահեր է ստեղծում ***գտնել*** բայի սխալ գործածությունը: ***Ես գտնում եմ, որ...*** Ոչինչ էլ չես գտնում. դու ընդամենը ***կարծում*** ես: ***Այդ օրը նա ներկա է գտնվել:*** Ոչ, ***ներկա է եղել***: ***Համալսարանում դասեր եմ վերցրել***: Ճիշտ է՝ ***դասավանդելու եմ***: ***Վերցնել*** բայը հաճախ է գործածվում ***գնել*** բայի փոխարեն, որը խեղում, հաշմում է միտքը: Օրինակ՝ ***մոտակա խանութից եմ վերցրել կոշիկներս***: Այնպիսի տպավորություն է, ասես վերցրել ու չես վճարել դրանց դիմաց: Շատ գրագետ մարդիկ անգամ չեն շրջանցում այս բառակապակցությունները՝ ***ֆրանսերեն լեզու, անգլերեն լեզու, հայերեն լեզու***. ***-երեն*** ածանցը արդեն ***լեզու*** բառի իմաստն ունի: Պետք է ասել ***հայերեն*** կամ ***հայոց լեզու, ռուսերեն*** կամ ***ռուսաց լեզու*** և այլն:

Բարբառի վնասակար ազդեցությամբ չէ՞, որ ***այո***-ն դուրս է մղվել և հաղթողի իրավունքով մեր լեզվում հարմար տեղավորվել օտարաշունչ ***հա***-ն:

Մինչդեռ բառարանում հայերեն համարժեքները իրենց գործածության հերթին են սպասում՝ ***այո, իհարկե, անշուշտ, անկասկած, իրոք***...

Հայկական հեռուստաալիքներով ցուցադրվող սերիալների լեզուն՝ անխղճորեն աղավաղված, խեղված, մեծ անհանգստության տեղիք է տալիս:

Հայացքներս ուղղենք մեր գրականության անմեռ հեղինակներին, որպեսզի սրբագործենք, հղկենք ու պահենք մեր լեզվի գաղտնիքները: Մենք ձգտում ենք տիրապետել, նպաստել նրա զարգացմանը, զորացմանը, նորանոր հնարավորությունների բացահայտմանը՝ նոր ժամանակների պահանջների համեմատ:

Եկեք բոլորս՝ մեծ թե փոքր, միանանք մեծ հայագետ Արսեն Ղազիկյանի տենչանքին, զորավոր իղձին և առաջնորդվենք նրա խորախորհուրդ խոսքով. «Չիս պահապան հրեշտակ հայ լեզվին կոչե՛ք. ո՞ւր էր թե ունենայի հրեշտակի մը թևերն ու թռիչքը, թռչեի-հասնեի քաղաքեքաղաք, դռնեդուռ և ամեն հայու սրտին մեջ հրդեհներ հանեի, հայ լեզուն սիրելու, գգվելու, անոր վրա գուրգուրալու...»:

**Էվելինա ՂՈՒԼՅԱՆ**
**ԼՂՀ Ասկերանի շրջանի Ակնաղբյուրի՝ Վ.Ջիվանշիրյանի անվ. միջնակարգ դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի**

# ԵՐՋԱՆԻԿ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

*(դիմանկարի փորձ)*

1969թ. սեպտեմբերի 1-ին էր, երբ սիրունատես մի օրիորդ բախեց Խնապատի միջնակարգ դպրոցի դուռը. նորանշանակ ջոկատավարն էր՝ Ռոմելա Սիմոնյանը:

Կապվեց աշակերտների հետ, նրանք էլ սիրեցին իրենց ջոկատավարին: Բոլորի հետ պիոներ էր դառնում ու կոմերիտական. խորհրդային երկրի պատվավոր ու փառահեղ կազմակերպություններ, որոնց անդամագրվելն իսկ յուրահատուկ տոն էր: Ամենայն բարեխղճությամբ ու մեծ պատասխանատվությամբ էր կատարում իր պարտականությունները, երեխաների համար կազմակերպում հետաքրքիր միջոցառումներ ու արշավներ:

Ավանդույթներով հարուստ Խնապատի միջնակարգ դպրոցում սիրեցին ու գնահատեցին ջոկատավարի աշխատանքը: Նա էլ իր երջանկությունը գտավ այս գյուղում: Ամուսնացավ ու երեք երեխա պարգևեց մեր հասարակությանը, որոնք դարձան Արցախ աշխարհի արժանավոր քաղաքացիներ. երկու աղջիկներն ընտրել են մանկավարժի պատվաբեր մասնագիտություն, իսկ որդին՝ տնտեսագետի:

Տասը տարի ջոկատավար աշխատելով՝ չբավարարվեց դրանով: 1977 թվականին ընդունվեց Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտ, որն ավարտեց 1982-ին՝ (մանկավարժություն և հոգեբանություն) դասվարի մասնագիտությամբ. ուզում էր ավելի մոտ լինել երեխաներին:

Եվ սկսվեց նրա կյանքի մի նոր շրջափուլ՝ դաս-դասարան բովանդակությամբ: Հենց սկզբից էլ ամուր թելերով կապվեց իր սաներին՝ նրանց հոգում վառելով անմար կրակ ապագայի ու նվիրական երազանքների կատարման ճանապարհին:

Լինել լավ դասվար՝ բոլորին չի հաջողվում, որովհետև մանկական աշխարհ ներթափանցելու ու այդ անմեղ էակների սիրտը տանող ճանապարհը գտնելու սուրբ առաքելությանը քչերն են ընդունակ:

Սիրում էր բոլոր սաներին անխտիր. լավ ու վատ, առավել ու պակաս երեխա չկար նրա համար, բոլորը հավասար էին:

Եվ միայն նման պայմաններում են ձևավորվում համերաշխ կոլեկտիվներ, որի անդամներն ապրում են մեկը մյուսի ուրախությամբ ու տխրությամբ, կյանքում էլ միշտ դառնում են հանդուրժող, կարեկից ու բարի մարդիկ:

Բոլոր դասալսումների ժամանակ արված նշումների մեջ գերակշռել է այն միտքը, որ ուսուցչուհին շատ նուրբ ու քնքուշ հարաբերություններով է կապված երեխաներին: Նրա ընձեռած հնարավորության պայմաններում սաներն ավելի ազատ ու անկաշկանդ են դրսևորում իրենց գիտելիքները, արտահայտում սեփական կարծիքը:

Ուզում եմ անդրադառնալ այդ դասալսումներից հատկապես մեկին, որը շատ տպավորել է ինձ ու ամեն ինչով բացահայտում է մարդուն ու նրա մարդկային հատկանիշները:

2005-ին էր. դասալսում էի կատարում այն դասարանում, որտեղ սովորում էր Արսենը: Նա այն դժբախտ որբուկներից էր, որին դաժան ճակատագիրը չէր խնայել. մինչ իր ծնունդը հայրը թողել-հեռացել էր, իսկ ծնունդից հետո՝ դեռ բարուրի մեջ, մայրը մի մառախլապատ օր ոչխարներին փնտրելիս ժայռից գահավիժել էր ձորն ու մահացել:

Փոքրիկը մնացել էր մայրական տատիկի խնամքին: Դժվար էր ծեր կնոջ համար նորածնին խնամելը, բայց դիմանում էր, ուրիշ ելք չուներ:

Ահա այս Արսենը նստած էր վերջին նստարանին և անհանգիստ ինչ-որ բան էր փնտրում գրպաններում՝ համոզված, որ այնտեղ ոչինչ չկա: Ուսուցչուհին, նկատելով Արսենի անհանգստությունը (իմիջիայլոց, նրա աչքից ոչինչ չէր վրիպում), մոտեցավ և տեսավ իր սանի արյունոտ մատը: Ցավը զսպելով՝ Արսենը պատմեց, որ առավոտյան խոհանոց մտնելիս է մատը թողել դռան արանքում:

Անմիջապես գործի անցավ ընկեր Սիմոնյանը. ձեռքի տակ ունեցած միջոցներով վիրակապեց Արսենի մատը: Մայրական փաղաքուշ ձեռքը դիպավ որբուկին… Ցավն անցավ: Ժպիտը խաղաց սանիկի դեմքին: Ես հեռվից հեռու դիտում էի այս սրտահույզ տեսարանը ու սպասում ավարտին (համոզված էի դրանում):

Քիչ անց, երբ ուսուցչուհին կրկին մոտեցավ վերջին նստարանին, ինձ լսելի դարձան Արսենի խոսքերը.

-Շնորհակալությու՛ն, ընկե՛ր Սիմոնյան…

Վերջինս ձեռքով շոյեց նրա գլուխը, ժպտադեմ խառնշտեց մազերը, և … լցվեցին աչքերը (նաև՝ իմը):

Այսպես՝ ամեն երեխայի հետ, ամեն ցավի ու խինդի հետ, ամեն նոր սերնդի հետ:

Ու տարիները խլում էին նրա երիտասարդությունից ամեն անգամ մի պճեղ՝ ճերմակն ավելացնելով մազերին:

Անցել են տարիներ, մեր բոլորիս հատուկ ուշադրության պայմաններում Արսենն էլ ավարտել է դպրոցը ու հասուն մարդ դարձել, բայց, համոզված եմ, նրա հիշողությունից երբեք չեն ջնջվի այն վիրակապը, մայրական փաղաքուշ ու ջերմ շունչը, ցավի մեղմումը…

Տարիներ են գլորվել, ու բազում սերունդներ է ուսուցչուհին ճանապարհել դեպի կյանք, որոնք նշանավոր մարդիկ են դարձել:

Այսօր բազմավաստակ ուսուցչուհին թոշակի է անցել՝ չնայած նրան, որ դեռ տալու շատ բան ուներ մեր հասարակությանը, որովհետև դեռ ավյունով ու կորովով էր լցված:

Այսուհանդերձ, սիրելի՛ ընկեր, մխիթարվի՛ր նրանով, որ հոգուդ անթեղած կրակով բազում սրտեր ես վառել, անմնացորդ նվիրվել մանուկների հրաշք-աշխարհին, նրանց հետ մանկացել ու իմաստավորել կյանքդ:

Քեզ հիշելու են նրանք, ում ձեռքից բռնել ու «այբ» ու «բեն» ես հեգել, ում հոգում քո կրակից մի կայծ ես պարգևել:

**Ս.ՂԱՋԱՐՅԱՆ**

## ԷՔՍՏԵՌՆ

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# Ղ Ր Ա Մ Ա Ն

« 21» հունվարի 2015թ. N5/Մ

ք. Ստեփանակերտ

## 2015 ԹՎԱԿԱՆԻ՝ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 23.10.2012 թվականի N181-Ն հրամանով հաստատված՝ «Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգի» 20-րդ կետի և 23-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները՝

*ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ*

1. Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննություններ անցկացնելու իրավունքը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Ստեփանակերտի Ա.Սախարովի անվան հ.8 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին:
2. Քննություններն անցկացնել 2015 թվականի փետրվարի 2-ից մինչև մարտի 14-ը ընկած ժամանակահատվածում՝ ըստ կից աշխատակարգի և ժամանակացույցի (Հավելված 1, Հավելված 2):
3. Սույն հրամանի կատարման ապահովումը հանձնարարել նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչությանը (պետ՝ Ռ.Մուսայելյան)
4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

**Ս. ԱՍՐՅԱՆ**

*Հավելված 1*
*Լեռնային Ղարաբաղի Հանրապետության*
*կրթության և գիտության նախարարի*
*2015 թվականի հունվարի 21-ի*
*N 5/Մ հրամանի*

### 2015 ԹՎԱԿԱՆԻ՝ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՈՎ (ԷՔՍՏԵՌՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

1. Հիմնական կրթության վկայական ստանալու համար դրսեկները՝ «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ օտար լեզու՝ դրսեկի ընտրությամբ), «Համաշխարհային պատմություն», բնագիտական՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Հայաստանի աշխարհագրություն» (դրսեկի ընտրությամբ) և «Ռուսաց լեզու, գրականություն» (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար) առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

1) Քննական թեստերը կազմում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնը (այսուհետ՝ ԳԹԿ)՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով:

2) «Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն»,«Աշխարհագրություն», «Ինֆորմատիկա», «Տեխնոլոգիա», «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն» առարկաների քննությունները հանձնում են բանավոր: Քննական հարցատոմսերը կազմում են էքստեռն քննություններ ընդունող դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից, գնահատման 10 բալային համակարգով:

2. Միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար դրսեկները՝ «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ այլ օտար լեզու՝ դրսեկի ընտրությամբ), «Համաշխարհային պատմություն», բնագիտական՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» (դրսեկի ընտրությամբ), «Ռուսաց լեզու, գրականություն» (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար) առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

1) Քննական թեստերը կազմում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնը՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով:

2) «Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն» առարկաների քննությունները հանձնում են բանավոր: Քննական հարցատոմսերը կազմում են Դպրոցի համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 10 բալային համակարգով:

3. Դրսեկության ձևով (ավարտական՝ ուսումնական պլաններով նախատեսված առարկաներից) քննությունները դրսեկները հանձնում են համաձայն հավելված 2-ի:

4. Հարցատոմսերով կազմակերպվող բանավոր քննությունների անցկացման ժամանակ յուրաքանչյուր դրսեկ վիճակահանությամբ ստանում է առանձին առաջադրանք (հարցատոմս): Դրսեկը, բանավոր քննություններին նախապատրաստվելիս կարող է կատարել գրավոր համառոտագրում:

1) Դրսեկության ձևով քննությունների արձանագրությունները և գրավոր աշխատանքները պահպանվում են Դպրոցում, ավարտական փաստաթղթերը ստանալուց հետո՝ մեկ տարի:

5. Հիմնական կրթության վկայականում և միջնակարգ կրթության ատեստատում ավարտական և պետական ավարտական քննական առարկանները գնահատվում են 20 բալային համակարգով, իսկ տարեկան գնահատականները նշանակվում են՝ 20 բալային համակարգից գնահատականները վերածելով 10 բալային համակարգի:

1) Բանավոր քննությունները գնահատվում են 10 բալային համակարգով և համարվում են տարեկան գնահատականներ:

6. Գնահատականները գրանցելիս գնահատման 20 բալային համակարգից 10 բալային համակարգին անցման համապատասխանությունը կատարվում է համաձայն հետևյալ սանդղակի՝

| | |
|---|---|
| 8-9 միավոր-4 | 16-17 միավոր-8 |
| 10-11 միավոր-5 | 18-19 միավոր-9 |
| 12-13 միավոր-6 | 20 միավոր-10 |
| 14-15 միավոր-7 | |

7. Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպելու և անցկացնելու գործընթացը վերահսկվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից:

***Ծանոթություն***: Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպվում են «Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու» կարգի և սույն աշխատակարգի պահանջների համաձայն:

*Քննությունների սկիզբը ժամը 10:30-ին:*

*Հավելված 2*
*Լեռնային Ղարաբաղի Հանրապետության*
*կրթության և գիտության նախարարի*
*2015 թվականի հունվարի 21-ի*
*N 5/Մ հրամանի*

### ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

| | Առարկա | քննության անցկացման եղանակը | քննությունների անցկացման օրերը |
|---|---|---|---|
| 1. | ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն | բանավոր | 17.02.2015թ. |
| 2. | Հայոց եկեղեցու պատմություն | բանավոր | 18.02.2015թ. |
| 3. | Տեխնոլոգիա | բանավոր | 04.03.2015թ. |
| 4. | Հասարակագիտություն | բանավոր | 20.02.2015թ. |
| 5. | Ինֆորմատիկա | բանավոր | 23.02.2015թ. |
| 6. | Համաշխարհային պատմություն | գրավոր | 02.03.2015թ. |
| 7. | Օտար լեզու- անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ ռուսերեն | գրավոր | 27.02.2015թ. |
| 8. | Աշխարհագրություն | բանավոր | 25.02.2015թ. |
| 9. | Ռուսաց լեզու, գրականություն /ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար/ | գրավոր | 05.03.2015թ. |
| 10. | Բնագիտություն- Հայաստանի աշխարհագրություն Ֆիզիկա Քիմիա Կենսաբանություն | գրավոր | 07.03.2015թ. 11.03.2015թ. 13.03.2015թ. 14.03.2015թ. |

### ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՏԵՍՏԱՏ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| | Առարկա | քննության անցկացման եղանակը | քննությունների անցկացման օրերը |
|---|---|---|---|
| 1. | ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն | բանավոր | 17.02.2015թ. |
| 2. | Հայոց եկեղեցու պատմություն | բանավոր | 18.02.2015թ. |
| 3. | Հասարակագիտություն | բանավոր | 20.02.2015թ. |
| 4. | Ինֆորմատիկա | բանավոր | 23.02.2015թ. |
| 5. | Համաշխարհային պատմություն | գրավոր | 02.03.2015թ. |
| 6. | Օտար լեզու- անգլերեն, ֆրանսերեն,գերմ. ռուսերեն | գրավոր | 27.02.2015թ. |
| 7. | Ռուսաց լեզու, գրականություն /ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար/ | գրավոր | 05.03.2015թ. |
| 8. | Բնագիտություն – աշխարհագրություն ֆիզիկա քիմիա կենսաբանություն | գրավոր | 07.03.2015թ. 11.03.2015թ. 13.03.2015թ. 14.03.2015թ. |

ՍԵՐՈՒՆԴ

# ԿՅԱՆՔՍ ՄԻ ՏԱՐՈՎ ԷԼ ԱՎԵԼԱՑԱՎ

Այդ օրը պիտի գնայի Խնձրիստան՝ թոռնուհուս՝ Տաթևիկի ծննդյան 21-ամյակը շնորհավորելու:

20 տարի անընդմեջ իմ հարկի տակ ենք նշել նրա ծննդյան օրը, բայց այսօր ստիպված ենք գնալ նոր հարկի տակ նշելու: Ամռանն է ամուսնացել, նոր ընտանիք կազմել: Ավագ դստերս տան բակը կարգավորում էի, երբ դարպասի մոտ կանգնեց տեխնիկայի ամենավերջին ծնունդ համարվող ավտոմեքենան: Դարպասից ներս մտան երկու առնակազմ, հաղթանդամ տղաներ: Մեր մեծ կովը գիշերը մնացել էր հանդում, կարծում էի, թե ինչ-որ մեկին վնաս է հասցրել, եկել էին բողոքելու: Մինչդեռ այս տղաները, ուրախ-ուրախ մոտենալով ինձ, բարևում են ու՝

-Ընկե՛ր Շահնազարյան, եկել ենք քաղաքի Ձեր տունը, բայց, ցավոք սրտի, այն քանդված էր, և հարևաններից մեկը մեզ հայտնեց, որ Դուք Իվանյանում եք գտնվում, և ահա եկել ու Ձեզ ենք հանդիպել: Խնդրում ենք՝ շորերդ փոխես, մեզ հետ տեղ ենք գնալու:

Նայելով իմ զարմացած հայացքին՝ մեկ էլ... «Չե՞ք ճանաչում մեզ: Ձեր աշակերտներն ենք: Դասարանի տղաները հավաքվել, Ձեզ են սպասում: Պարզվում է, որ Ստեփանակերտի հ. 9 դպրոցի 1988 թվականի շրջանավարտներն են: Դպրոց, որտեղ աշխատել եմ ուղիղ 14 տարի և վերջին դասարանը, որի դասղեկն եմ եղել, 1990 թվականին եմ թողարկել:

Տղաներից ավելի հաղթանդամը՝ Դավիթը, զգալով, որ ես երկմտանքի մեջ եմ, շարունակեց. «Ընկե՛ր Շահնազարյան, ուղիղ վեց տարի մեզ պատմություն եք դասավանդել, և ավարտելուց հետո ամեն անգամ, երբ հավաքվում էինք, հիշում էինք Ձեզ, բայց չէինք կարողանում հանդիպել, իսկ այսօր Թումբում Ձեզ են սպասում մեր ընկերները և ընկ. Սահակյանն ու ընկ. Ստեփանյանը»: Հարցնում եմ՝ ինչ Թմբի մասին է խոսքը: Նա պատասխանում է. «Սիմոնի թումբը՝ Կրկժանի մոտ»: «Ա՜խ, Սիմոնը...»:

Սիմոնին հիշում եմ: Բոյով-բուսաթով տղա, որ նստում էր պատմության կաբինետի միջին շարքի վերջին նստարանին: Հիշում եմ՝ մեր Շարժման ակտիվ մասնակիցներից էր, մասնակցել է նաև մեզ պարտադրված պատերազմին: Հորեղբայրը՝ Մայոր Պետրոսյանը, Շուշիի մանկավարժական տեխնիկումի իմ դասընկերներից էր, իսկ մանկական հայտնի վիրաբույժ Նապոլեոն Պետրոսյանը երիտասարդական շրջանի ընկերներիցս է: Լսել եմ, որ Սիմոն Պետրոսյանը գնացել է Մոսկվա, աշխատանքի մտել, ընտանիք կազմել, որոշ գումար վաստակել և այդ գումարով հուշահամալիր է կառուցում: Եվ քանի՞-քանի անգամ Կրկժան մտնելիս վերջին կանգառում տեղացիները հիացմունքով էին խոսել Սիմոնի մասին, որ այդ Թումբը, որի վրա աճած բույսերն էլ անօգտագործելի են, անասունն էլ այնտեղ չէր կանգնում, հիմա Սիմոնի ջանքերով փոխվել է և բոլորի ուշադրության կենտրոնում է: Շատ եմ ցանկացել մի անգամ լինել այդ տեղամասում և ծանոթանալ իմ նախկին աշակերտի հրաշագործությանը, և ահա տեղում ենք: Սիմոնը «հյուրասենյակի» մուտքի մոտ ինձ էր սպասում: Եթե ընկերների հետ սեղանի շուրջը նստած լիներ, չէի ճանաչի: Չէ՞ որ ուղիղ 26 տարի է՝ չեմ հանդիպել: Մենք գրկախառնվում, ողջագուրվում ենք, և նա ինձ առաջարկում է տեղավորվել սեղանի գլխավերևում դրված բազկաթոռին: Ողջունելով բոլորին՝ ներողություն եմ խնդրում, որ մեկ-մեկ չեմ մոտենում ու ձեռք մեկնում, նույնիսկ դպրոցի նախկին տնօրեն, այժմ ԿԳ նախարարության բաժնի պետ Վ.Սահակյանին և դպրոցի նախկին զինղեկ Կ.Ստեփանյանին, շնորհակալություն եմ հայտնում հրավերի համար և զբաղեցնում ինձ հատկացված տեղը: Նստել էինք «արհեստանոցում», չակերտների մեջ եմ առնում, քանի որ դա արհեստանոցի նման չէր, այլ ավելի շատ նման էր գործարանի, և ինչպես հետագայում ծանոթացա, ինչ որ պիտի օգտագործվի շինհարթակում, արտադրվում է այդտեղ:

Սեղանը ես եմ ղեկավարում, քանի որ զբաղեցրածս աթոռն այդ էր պարտավորեցնում: Թե ինչ ծանրաբեռնվածության տակ էր սեղանը, չեմ կարող բառերով արտահայտել, բայց որ այս տղաներին 6-րդ դասարանում Միջին դարերի պատմության դասին «ֆեոդալների կենցաղը» թեման անցնելիս գունավոր նկարն եմ ցույց տվել, ինձ հիշեցրեց այն: Առատ սեղանից օգտվում են իմ նախկին աշակերտները, որոնք միևնույն ժամանակ այս կառույցի աշխատողներն են: Որպես վստահելի մարդիկ՝ Սիմոնն իր դասընկերներին է աշխատանքի ընդունել, և 30 աշխատակիցների զգալի մասը դասընկերներն են: Այո, 30 աշխատակից կա այս կառույցում, և աշխատավարձն էլ՝ նորմալ, նույնիսկ ոմանք ամսական 150.000 դրամ են ստանում: Ստացվում է, որ մեր նախկին աշակերտն այսօր 30 ընտանիքի կենսական հոգսերը բավարարողն է:

Ինչևիցե, բոլորը և՛ օգտվում են սեղանից, և՛ աշխույժ զրուցում, հիշում անցյալը, խոսում ներկայից, երազում ապագան: Ժամերը թռչում են թռչունների պես: Տեղս հանգիստ չեմ կարողանում նստել, քանի որ տեղ պետք է գնայի, սակայն Սիմոնի խնդրանքով հայտարարում եմ փոքրիկ ընդմիջում, և գնում ենք ծանոթանալու կառույց-կոթողին: Ասես հրաշք լինի: Կառույցի որ մասից էլ նայում ենք, կարծես քաղաքը ափիդ մեջ է: Նայում ու ավելի ես սիրում քո քաղաքամայրը: Ինչքա՜ն գեղեցիկ է, առանձնապես՝ երեկոյան: Նայում եմ դեպի երկինք խոյացող երկու խոշոր հուշարձաններին, մտքով գնում 1967թվականը. այնպես, ինչպես Երևան քաղաքի բարձրաբերձ, գեղատեսիլ Ծիծեռնակաբերդում կանգնեցված հուշարձան-կոթողն է 1915թ. Եղեռնի զոհերի հիշատակին, այնպես էլ Ստեփանակերտից Կրկժան տանող ճանապարհի ձախ կողմի բարձրաբերձ Թումբում Սիմոն Պետրոսյանն իր միջոցներով կառուցում է հուշարձան-կոթող՝ «Հայ ազգի գոյատևման պայքարի զոհերի հիշատակին»:

Թումբը հարթեցվել, գեղատեսիլ բարձունք է դարձել և իր 15 հեկտար տարածքով, որ դարեր, ավելի ճիշտ հազարամյակներ շարունակ չէր խոսում, լալ էր, այսօր լեզվի կապանքները բացվում են և խոսելու է աշխարհով մեկ, հայտնելու, որ եթե դարեր շարունակ մեզ չնեղեին, չտիրապետեին, և մեր գոյատևման պայքարում այնքան զոհեր չտայինք, ապա այսօր ոչ թե 10 միլիոն կլինեինք, այլ 300-ից 500 միլիոն հայ կլիներ աշխարհում:

Մեծ հետաքրքրությամբ ծանոթանում ենք հուշահամալիրի կառույցներին: Հաճույքով Խաչաղբյուրի զուլալ ջրով հագեցնում ենք մեր ծարավը: Խաչաղբյուր եմ ասում, քանի որ պատրաստված է մեծ խաչ, որի կենտրոնից բխում է քլքլան աղբյուր և չորս մասի բաժանված՝ հոսում հատուկ պատրաստված տեղը: Ջուր, որ հավերժության ու կենդանության խորհրդանիշ է: Մտնում ենք ներս, գետնի տակ մի քանի հարկ կազմող թանգարան է, որտեղ ամեն ինչ հարդարված է, որտեղ պետք է հարուստ նյութեր տեղադրվեն՝ ցուցադրելու հայ ժողովրդի ազատագրական պայքարի դրվագներից: Ես, որ շուրջ 60 տարվա մանկավարժական ստաժ ունեմ, մշակույթի վաստակավոր աշխատող, փոքրացել ու աշակերտ եմ դարձել, իսկ իմ աշակերտներն էլ՝ ուսուցիչներ, և ինձ բացատրում են իմ կողմից տված պատմությունը, այն է՝ քարերի լեզվով: Այո, քարերի լեզվով: Բայց դե ի՜նչ քար. ամեն քար, որ մի քանի տասնյակ տոննանոց է, հղկված է, և նրանց վրա Մեսրոպյան գրերի լույսով շարադրված են «Հայոց պատմության» բազմաթիվ էջեր՝ սկսած Հայկ նահապետի տված ճակատամարտերից՝ վերջացրած Շուշիի, Արցախի հինավուրց մայրաքաղաքի ազատագրումով: «Էքսկուրսավարները» լապտերների լույսով ցույց են տալիս քարե սալիկների վրա գրված և փորագրված արձանիկները: Հարցնում եմ ինձ, ու մեկ էլ ինձ հետ միասին պատասխանում են՝ քրիստոնեությունը, որպես պետական կրոն, մենք ընդունել ենք 301թ., Ավարայրի ճակատամարտը՝ 451թ., Մեսրոպ Մաշտոց. հայ գրերի գյուտ՝ 405թ., Գյուլիստանի պայմանագիր՝ 1813թ. հոկտեմբերի 12, Սարդարապատի ճակատամարտ՝ 1918թ. մայիս: Ես հիանում էի իմ նախկին աշակերտներով, որ այդպես հայոց պատմությունը անմահացրել են քարերի վրա: Գետնափոր կառույցը ոչ սկիզբ ունի և ոչ էլ վերջ, կարծես լաբիրինթոս է, առանց ուղեկցի հնարավոր չէ դուրս գալ: Այնուհետև ծանոթանում ենք կառույցի մյուս մասերին ու մտովի պատկերացնում, թե այս հուշարձան-համալիրը կառուցման ավարտից, բացումը կատարելուց հետո ինչպիսի եռուզեռ է լինելու այս բարձունքում: Այս կառույցով մեր քաղաքի (և ոչ միայն) բնակիչները ստանալու են մի գեղատեսիլ «Հանգստի գոտի», որտեղ անց են կացվելու հարսանյաց հանդեսներ, ծննդյան օրեր, կնունքներ, պարահանդեսներ, զանազան սպորտային մրցույթներ, նույնիսկ՝ ձիարշավներ, այո, այո, ձիարշավներ: Կառույցի վերջին մասում Սիմոնն ինձ ցույց է տալիս ձիարանը(ախոռը), որտեղ պահվելու և վարժեցվելու է 18 ղարաբաղյան ձի՝ մրցույթներ կազմակերպելու նպատակով:

Ավելի քան չորս միլիոն ԱՄՆ դոլար է ներդրել այս հոյակապ կառույցի շինարարության համար մեր 9-րդ դպրոցի 1988-ի շրջանավարտը, որն այսօր հայոց պատմությունը ոչ միայն անգիր գիտի, այլև իր ձեռքով փորագրել է հղկած քարե սալիկներին, որպեսզի բոլորի գիտակցությանը հասցնի: Պատկերացնո՞ւմ եք՝ քանի՜-քանի զբոսաշրջիկ է լինելու այստեղ, ծանոթանալու մեր պատմությանը և այս հուշարձան-համալիրով հիացած՝ աշխարհի հանրությանը հասցնելու, թե ինչի է ընդունակ հայը, ղարաբաղցին:

Այնպես որ, իմ ամենաերջանիկ օրերից մեկն էր, և կյանքս մի տարով էլ ավելացավ: Աշակերտս՝ Սիմոն Պետրոսյանը, որին հայոց պատմությունից «4» եմ նշանակել, այսօր ապացուցեց, որ սխալ եմ գնահատել, և մեծ հաճույքով սխալս ուղղում եմ ու նշանակում «5+», միաժամանակ մտորումների մեջ ընկնում. ախր շատ աշակերտ էլ եմ ունեցել, որին «5» եմ նշանակել, բայց նա կյանքում հայանպաստ ոչինչ չի արել իր գերդաստանով, ամեն ինչի դիմել է, միայն թե հարստանա, այնպիսին էլ կա, որ նույնիսկ իր ուսուցչի խնամած այգեմասին է տիրացել: Ինչ եմ ուզում ասած լինել. մենք լավ չենք ճանաչել մեր աշակերտներին, առանձնապես այսօրվա աշակերտներին, որոնք, մասնավոր սեփականության քաղցրությամբ տարված, ոտնահարում են որոշ սրբություններ:

Քանի՜-քանի անգամ մամուլում հանդես եմ եկել, որ նոր հասարակություն, քաղաքացիական հասարակություն ենք կառուցում, և այդ նոր հասարակությանը նոր մարդ է հարկավոր, և նրա դաստիարակությամբ ոչ միայն պիտի զբաղվի դպրոցը, այլ նաև եկեղեցին, համայնքը, համայնքի ղեկավարությունը, ՁԼՄ-ները, իսկ ամենից շատ՝ ընտանիքը: Ընտանիքն է նոր հասարակության հիմքը, և ընտանիքի հետ պետք է լուրջ աշխատանք տարվի: Ինչպես տեսնում եք, Պետրոսյանների գերդաստանը գերհայրենասեր մարդ է դաստիարակել, և մեր հասարակությունը այդպիսի մարդկանցով պիտի համալրվի: Ուստի, խնդրում եմ «Լուսարար»-ի իմ շատ պաշտելի խմբագրին, որ ժամանակ գտնի ու իր համարներից մեկում մանրամասնորեն տեղեկություններ տա (իհարկե, նկարներով էլ) նշածս հուշահամալիրի մասին: Եթե կարիք լինի իմ օգնության, պատրաստ եմ ուղեկցելու:

**Մաղլեն ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ**
**Անհատական թոշակառու, ուսուցիչ**

# ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋԸ

Հադրութի Մ.Մանվելյանի անվան միջնակարգ (հոսքային) դպրոցի կոլեկտիվը շնորհավորում է դպրոցի վաստակաշատ դասվար Լյուդմիլա Գյուլիշանյանին՝ 60-ամյա հոբելյանի կապակցությամբ:

Հարգելի՛ տիկին Գյուլիշանյան, Ձեր մանկավարժական գործունեության բազմամյա փործը ուսանելի է մանկավարժության ոլորտում:

Որպես մաշտոցյան պատգամի աչալուրջ հետևորդ՝ Դուք կրթել ու դեպի մեծ կյանք եք ուղղորդել սերունդների, որոնք պայքարել են մեր հայրենիքի ազատության, անկախության համար՝ դառնալով քաջարի մարտիկներ:

Ինչպես մանկավարժության, այնպես էլ ընտանեկան միջավայրում լավագույնս են դրսևորվում Ձեր մարդկային բարձր արժանիքները՝ հայ կնոջ բոլոր առաքինություններով հանդերձ:

Թող ձեր կյանքի ուղին լեցուն լինի խինդով ու ցնծությամբ:

**«Հադրութի Մ.Մանվելյանի անվան միջնակարգ (հոսքային) դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական կոլեկտիվ**

# ԸՆՏԱՆԻՔ- ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՁԵՎԵՐԻՑ

Հաթերքի պետական մանկապարտեզի «Արևիկ» խմբի դաստիարակների կազմակերպած «Խոհարար մայրիկ, խոհարար բալիկ» թեմայով մրցույթի թողած տպավորությունը դեռ երկար ժամանակ կուղեկցի նրա մասնակիցներին:

Մրցույթի նպատակն էր խոհարարական սննդակարգի մասին գիտելիքների ձեռքբերումը, ինչպես նաև գաղափար տալ ուտելիքի օգտակարության, նրա պատրաստման, սննդակարգի ծագման մասին:

Մրցույթին մասնակցում էին «Արևիկ» խմբի բոլոր երեխաներն իրենց ծնողների հետ: Մրցույթն անցկացվեց 2 փուլով: Առաջին փուլում երեխաներն իրենց ծնողների հետ բաժանվեցին 3 խմբի: Առաջին խումբը պետք է պատրաստեր մեր հայկական, ավանդական ժենգյալով հացը, երկրորդ խումբը պետք է պատրաստեր իտալական պիցա, երրորդ խումբը՝ թխվածքաբլիթներ: Երեխաներն ու ծնողները հագել էին խոհարարական համազգեստ: Խմբերը սկսեցին հերթականությամբ ներկայանալ: Նրանք ներկայացրին իրենց խմբի բոլոր անդամներին, ինչպես նաև մանրամասն՝ պատրաստվող ուտելիքի տեսակը, բաղադրատոմսը և պատրաստման եղանակը: Ծնողները երեխաներին ծանոթացրին նաև էլեկտրական սարքավորումներին, որից հետո սկսեցին իրենց խոհարարական հմտություններով վարակել երեխաներին: Նրանք ուրախ ու ակտիվ էին և իրենց փոքրիկ խոհարարներ էին պատկերացնում: Բավական էր նայել նրանց աչքերի փայլին, անկեղծ ու երջանիկ ժպիտներին՝ հասկանալու համար նրանց ոգևորության և ուրախության աստիճանը: Մայրիկները մեծ սիրով բացատրում ու ցույց էին տալիս իրենց բալիկներին ուտելիքի պատրաստման ողջ գործընթացը:

Մրցույթի երկրորդ փուլում խմբերն առանձին-առանձին ներկայացրին իրենց պատրաստած ու գեղեցիկ ձևավորած ուտելիքները: Ժյուրին հայտնեց իր կարծիքը, խմբի ավագները նույնպես կարծիք հայտնեցին: Յուրաքանչյուր խմբից մեկ մայրիկ և մեկ բալիկ հաղթող ճանաչվեցին: Մանկապարտեզի տնօրեն Լաուրա Պողոսյանը հաղթողներին պարգևատրեց «Լավագույն խոհարար մայրիկ», «Լավագույն խոհարար բալիկ» պատվոգրերով:

Վերջում պատրաստված ուտելիքներով սեղան դրվեց, և բոլորը միասին համտեսեցին: Արդյունքում երեխաների մեջ ձևավորվեց սպասքադրման ճաշակ, կարողություն, հմտություն, հետաքրքրություն, աշխատասիրություն, լսելու ընդունակություն և համարձակություն:

Ցանկալի է նմանատիպ միջոցառումներ կազմակերպել բոլոր մանկապարտեզներում, քանի որ դրանք նպաստում են ընտանիք-մանկապարտեզ կապին: Ինչպես ասում են՝ մանկապարտեզը և ընտանիքը նույն գետի երկու ափերն են: Համագործակցելու համար պետք է կրճատել և միասին հարթեցնել երկուսի միջև ընկած տարածությունը:

**Արփինե ՍԱՐԳՍՅԱՆ**
**Հաթերքի պետական մանկապարտեզի դաստիարակ**

ՀՈԲԵԼՅԱՆ

# ՆՈՐԱՆՈՐ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ

*Լրացավ բանաստեղծ, թարգմանիչ, հասարակական գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Սոկրատ ԽԱՆՅԱՆԻ ծննդյան 85 և գրական, գիտամանկավարժական գործունեության 65-ամյակը: Մեր հարցազրույցը անվանի մտավորականի հետ:*

***-Սոկրատ Աղալարի, նախ, թույլ տվեք «Լուսարար»-ի բազմահազար ընթերցողների անունից Ձեզ շնորհավորել ծննդյան 85-ամյակի առթիվ՝ մաղթելով ամենալավն ու բարին: Ասացեք, խնդրեմ, ո՞վ է Սոկրատ Խանյանը. բանաստե՞ղծ, գրականագե՞տ, մանկավա՞րժ...***

- Խորին շնորհակալություն «Լուսարար»-ի ընթերցողներին: Շնորհակալություն, որ չեք մոռացել իմ ծննդյան օրը, ասել է թե՝ «Լուսարար»-ի ակտիվ ընթերցողին, թերթ, որի բաժանորդն եմ հիմնադրման օրից: Բացի այդ, «Լուսարար»-ի ընթերցողների մեծ մասն իմ ուսանողներն են՝ այսօրվա իմ գործընկերները: Ուսուցիչ լինելը, իրոք, երջանկություն է, որովհետև ուսուցիչն ապրում է իր սաների մեջ, սաները՝ իրենց ուսուցչի կրծքի տակ:

Ձեմ թաքցնում, ես երջանիկներից մեկն եմ, քանզի Աստված իր շնորհներից մի քանիսն է նվիրել ինձ: Ես դա զգացել եմ դեռևս դպրոցական տարիներին: Գերազանց սովորելուց բացի ստեղծագործում էի: Պատկերացնո՞ւմ եք, 3-րդ դասարանում մասնակցեցի մարզային օլիմպիադային, և իմ «Ով է նվիրել» բանաստեղծությունը տպագրվեց «Խորհրդային Ղարաբաղ» թերթում: Իմ երաժիշտ քեռիների շնորհքն անցավ ինձ: Սկսեցի նվագել ժողովրդական գործիքներով: 8-10-րդ դասարաններում սովորելիս կազմակերպել էի երգի-պարի համույթ, հանդես էինք գալիս նաև հարևան գյուղերի ակումբներում: Բանաստեծն Աստծո պատվիրանների իրականացնողներից է, նրա քարտուղարը: Շնորհալի բանաստեղծը պետք է լինի նաև շնորհալի գրականագետ, իսկ գրական հայացքներին ո՞վ կարող է գրողից առավել տիրապետել: Բանաստեղծն ու գրականագետն իմ մեջ ապրում են համերաշխ, իրար չեն խանգարում, ինչ-որ տեղ նույնիսկ օգնում են միմյանց: Ինչ վերաբերում է մանկավարժին, կարող եմ ասել, որ 3-4-րդ դասարաններում իմ ուսուցիչը եղել է ավագ եղբայրս՝ Սուրեն Խանյանը, որը նոր էր ավարտել Հադրութի մանկավարժական ուսումնարանը և աշխատանքի անցել մեր գյուղի դպրոցում: Նա 1941-ին մեկնեց ռազմաճակատ ու նահատակվեց հերոսաբար: Միշտ երազել եմ եղբորս նման դառնալ մանկավարժ, ու կատարվել է իմ երազանքը: Այնպես որ, Սոկրատ Խանյանի դիմանկարում համահունչ են բանաստեղծ-գրականագետ-մանկավարժ կոչումները:

***- Երկարամյա գիտամանկավարժական աշխատանքի ընթացքում մի քանի սերունդների եք դասավանդել: Ճի՞շտ է, որ Ձեր նախկին ուսանողներին դեմքով և անուններով հիշում ու ճանաչում եք:***

- Այո, ճիշտ է: Իմ նախկին ուսանողներին հիշում ու ճանաչում եմ ոչ միայն դեմքով և անուններով, այլև հիշում եմ, թե որ լսարանում որ նստարանին էր նստում:

***- Կարծիք կա, որ գրականագիտությունը որպես գիտություն Արցախում և Հայաստանում նահանջ է ապրում: Կիսո՞ւմ եք այս կարծիքը:***

- Գրականագիտությունը լայն հասկացություն է: Ընդհանրության մեջ այն նահանջ ապրել չի կարող: Նրա երեք հիմնական բաժիններից այսօր, կարելի է ասել, իր բարձրության վրա չէ «Գրական քննադատությունը», սակայն նահանջ է ապրում «Գրականության տեսությունը»: Բավարար հիմքերի վրա է «Գրականության պատմությունը»: Վերջին տարիներս լույս են տեսել ոչ քիչ մենագրություններ, դասագրքեր, օժանդակ ձեռնարկներ և այլն:

***- Ի՞նչ կասեիք Արցախում ստեղծվող գրականության մասին: Համահայկական գրական դաշտում այն ուրույն տեղ ունի՞:***

- Մինչև Արցախյան ազգային-ազատագրական պայքարը, սկսած 1954 թվականից՝ որոշակի տեղաշարժ նկատվեց Արցախի գրական ընտանիքում: Հանդես եկան Ս. Աբրահամյանը, Բ. Ուլուբաբյանը, Բ. Ջանյանը, Ի. Ալավերդյանը, Մ. Յախշունցը, Իսպետը և ուրիշներ: Ապա ասպարեզ իջավ Գ. Գաբրիելյանի, Մ. Հովհաննիսյանի, Հ. Բեգլարյանի, Ս. Խանյանի, Ն. Ավագյանի, Ա. Հովհաննիսյանի, Վ. Օվյանի սերունդը: Արցախի սերուցքն իրեն զգալ տվեց նոր թարմ ուժերով: Հանդես եկան Վ. Հակոբյանը, Կ. Դանիելյանը, Ա. Թովմասյանը, Հ. Ալեքսանյանը, Ժ. Բեգլարյանը, Կ. Գաբրիելյանը, Ն. Գասպարյանը, Մ. Ոբնը, Դ. Միքայելյանը, Ռ. Եսայանը, Ն. Սողոմոնյանը, Ա. Արսենին և ուրիշներ: Սակայն ճշմարտությունը պահանջում է նշել, որ համահայկական գրական դաշտը նոր երանգներով ստեղծվեց Արցախյան պատերազմի տարիներին և, այսպես կոչված, «Ոչ խաղաղություն-ոչ պատերազմ» ժամանակաշրջանում: Վստահ կարող եմ ասել, որ Արցախում ստեղծվող գրականության մեջ կան արձակ և չափածո այնպիսի երկեր, որոնք համապատասխանում են գրական բարձր մակարդակի երկերի գնահատման չափանիշներին: Ժամանակը՝ ամենաարդարացի քննադատը, հետագայում ասելու է իր խոսքը:

***- Քանի՞ գրքի հեղինակ եք:***

- Հեղինակ եմ 25 բանաստեղծական ժողովածուների, 35 գրականագիտական ուսումնասիրությունների: Կարևորում եմ նաև այն հինգ բանաստեղծական գրքերը, որ թարգմանել եմ ռուսերենից: Շուտով կտպագրվի Մ. Առստամյանի «Հայոց ցեղասպանությունը գերմանական և ավստրիական գրականության մեջ» աշխատությունը՝ իմ թարգմանությամբ:

***- Ստեղծագործական առումով ո՞ր տարիքում է եղել Ձեր ամենաբեղմնավոր շրջանը:***

- Ստեղծագործական իմ ամենաբեղմնավոր շրջանն առնչվում է Արցախյան ազգային-ազատագրական պայքարին և հետպատերազմյան շրջանին: Մենք՝ Արցախում ապրող գրողներս, ազատագրվեցինք նաև ստեղծագործական առումով: Ձերբազատվեցինք մի կողմից խորհրդային կաղապարող գաղափարաբանությունից, մյուս կողմից՝ Ադրբեջանի ՊԱԿ-ի վերահսկող գրաքննչությունից: Մեր հոգիներում ճչաց հայկականը՝ ազգայինը, որը չէր կարող չունենալ իր դրական արդյունքը: Իմ նվաճումներից են «Արցախի արծիվը» պոեմը, որն արժանացավ ԼՂՀ Եղիշեի անվան մրցանակին, «Նահատակ լուսո» պոեմը՝ նվիրված անմահ հերոս Ավոյի սխրանքին: Տպագրվեցին իմ բանաստեղծական նոր ժողովածուներն ու գրականագիտական ուսումնասիրությունները:

***- Ի՞նչ նոր ծրագրեր ունեք առաջիկայում:***

-Աշխատում եմ բանաստեղծական նոր ժողովածուի վրա: Հետևում եմ մեր գրական օջախի ներկայացուցիչների նոր խոսքին: Հրատարակության եմ պատրաստում մի նոր ժողովածու՝ նվիրված Արցախի կին ստեղծագործողներին: Գրական ընթացքն ունենում է նաև անակնկալներ: Իսկ ես ընդունում եմ ուրախացնող անակնկալները:

***- Երկարակեցությունը որևէ բանաձև ունի՞: Կարո՞ղ եք ասել «Հավերժ երիտասարդության» գաղտնիքը:***

- Երկարակեցությունը, անշուշտ, ունի իր բազմազան բանաձևերը: Դրանք են տոհմածառի կողը, գուցե անվանենք՝ գենը: Պապս ապրել է 110, հայրս՝ 100 տարի: Աշխատասիրությունը: Աշխատանքը բերկրանք է, որը մարդկային կյանքի զուլալ աղբյուրներից մեկն է: Բարությունը, առաջին հերթին ընկերոջ, բարեկամի, հարևանի հաջողությամբ ուրախանալը: Խմիչքի չափավոր օգտագործումը: Չծխելը. երբեք չեմ ծխել՝ հորս հորդորով: Ընտանիքում երեխաների և նրանց մոր հանդեպ եղած աստվածահաճո վերաբերմունքը: Այս և նման առաքինությունները մարդուն առնում են կենսասիրության թևերին ու տանում դեպի երկարակեցության ծաղկադաշտ:

***- Ի՞նչ կմաղթեիք ինքներդ Ձեզ, որը 85-ամյա հոբելյանի առիթով հնչած շնորհավորանքներում դեռևս չի ասվել:***

- Ես ինձ կցանկանայի քաջառողջություն՝ մեր ժողովրդի ապահով անվտանգության պայմաններում: Իմ 85-ամյա հոբելյանի առիթով հնչած բոլոր շնորհավորանքները միաժամանակ պարտավորեցնող պատվիրաններ են: Օգտվելով առիթից՝ «Լուսարար»-ի միջոցով իմ սրտանց շնորհակալությունն եմ հայտնում ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանին՝ «ԼՂՀ վարչապետի հուշամեդալով» ինձ պարգևատրելու համար: Իմ շնորհակալությունն եմ հղում նաև ԼՂՀ ԿԳ նախարար Սլավա Ասրյանին՝ նախարարության պատվոգրով պարգևատրելու կապակցությամբ:

***- Դե, ուրեմն՝ ամփոփենք բոլոր բարեմաղթանքներն ու կրկին հասցեագրելով Ձեզ՝ ակնկալենք նորանոր հարցազրույցներ հաճելի առիթներով:***

- Ամփոփման խոսքն ընդգծենք «Շնորհակալություն» սրտաբուխ արտահայտությամբ: Վստահ եմ, որ առաջիկա տարիներին հարցազրույցների առիթներ կլինեն: Մեր ժողովրդին մաղթենք խաղաղ կյանք, մեզ՝ նվիրում մեր ընտրած գործին:

**Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ*

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

### ՄԱՇՏՈՑՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Եվ նա եկավ Արցախ,
Այբուբենի լույսով հոգին լեցուն,
Եկավ որդու նման, Աստծո նման եկավ,
Որ Արցախին բաշխի գրոց լեզուն:
Ու թրթռաց սիրտը արցախական հողի,
Ու ճառագեց հոգին արցախական,
Շրջեց ավան ու շեն քայլով արարողի
Ու մեռոնով օծեց անապական:
Եվ Արցախը դարձավ անմահ լուսո խորան,
Հավատը կար, չկար սաղմոսն հայոց,
Բացվում էին խոսքից, խորհուրդներից նրա
Բազում հոգիների դռները գոց:
Նրա շնչից ծնվեց դպիրն Ամարասի,
Պատմագիրը ծնվեց, երգիչը մեծ,
Հայոց երգերը հին, նման մեղվապարսի,
Շուրջպարի մեջ առան բարձունք ու քերծ:
Ու շքերթը ձգվեց մեսրոպանուն մանկանց,
Մեսրոպացան օջախ, սեր ու հարգանք,
Անգամ բողբոջներին ու թերթերին ծաղկանց,
Հովը պար էր բռնում նրա անվամբ:
Եվ նա եկավ Արցախ՝ լույսը հոգու վրա
Եվ դարերում դարձավ նրան սատար,
Նրա աղոթքներով, օրհնանքներով նրա
Ողջ Արցախը դարձավ մեսրոպատառ:

### ԴԱՐԵՐԴ Ի ՎԵՐ

Դարերդ ի վեր, դարերդ ի վար,
Մաճի ճռինչ, հատու զենք,
Սարերդ ի վեր, սարերդ ի վար
Ծփուն արտեր, կալի երգ,
Հոգիդ լույսի մի շատրվան,
Սիրտդ՝ անհուն տիեզերք...
Քեզ նետեցին կառափնարան,
Մի նենգ ուղեղ, մի սև ձեռք,
Սակայն էլի ուղիդ անցար
Եվ տքնանքով, և փառքով,
Ոտքերիդ տակ միշտ վար ու ցանք,
Տաշտում՝ արդար հացը քո:
Հույսի հունդեր դու ցանեցիր
Պապենական դաշտերում,
Քաջի նման մաքառեցիր,
Աշխարհացունց մարտերում:

Արդ, ազատված դյուցազնի պես,
Հայացքդ դեպ Հայաստան,
Ծառս ես եղել ու ճչում ես
Հանուն մեր հին ու նոր տան:
Քո պատիվն ես դու պաշտպանում,
Քո անունը, քո լեզուն,
Բայց քնած է խիղճն աշխարհի՝
Հանցանքներով առլեցուն:
Քեզ խաչել են ուզում հավետ
Քո աստղածին լեռներում,
Բայց դու հաշտված դարերիդ հետ,
Ոսոխներիդ չես ներում:
Պայքարում ես պատվիդ համար
Ձավակներով քո անվախ,
Դու իմ բախտի միակ կամար,
Հազարամյա իմ Արցախ:

### ԱՌԵՂԾՎԱԾ

Մի տողիս մեջ ձայնն է պապիս,
Մի տողիս մեջ՝ հորըս,
Մի տողիս մեջ երգն է տատիս,
Մի տողիս մեջ՝ մորըս:
Մեկում շունչն է իմ քաջ եղբոր՝
Բեռլինի մոտ զոհված,
Մեկում շունչն է խիզախ որդուս,
Նոր մարտերում կոփված:
Մռովի հետ զրուցելիս
Պապիս ուժն եմ առնում,
Պապիս փառքը գովերգելիս
Սարն է դեմս հառնում:
Թարթառի հետ խոսք բացելիս
Տատս է քնքուշ ժպտում,
Տատիս հուշը երգ դարձնելիս
Թարթառն է իմ սրտում:
Քեզ երգելիս՝ իմ սրտի մեջ
Մեր գետերն են հոսում,
Մեր սարերին երգ ձոնելիս
Մեր պապերն են խոսում...
Այդպես, ահա, երկիրն իմ սուրբ,
Ձուլված կրակ-հևքիս,
Փայփայում է սիրտը իմ նուրբ,
Թևեր տալիս երգիս:

### ԻՄ ՈՒՍՈՒՑԻՉ

*Նվիրում եմ հայոց ուսուցիչներին*

Իմ ուսուցիչ, իմ արև, ծնողասիրտ իմ Աստված,
Քո փայփայած ծաղիկն եմ՝ երազել ես, որ բուրեմ,
Մեսրոպագիր իմ բախտի հավերժախոս այգաբաց,
Թող ծնկի գամ քո առջև ու մատներդ համբուրեմ:
Այբուբենված իմ արյան կանչը ձայնն է քո հոգու,
Իմաստության իմ առուն կարկաչում է քո մտքով,
Ինձ պարգևած քո հույսին ոչ մի մշուշ չի չոքում,
Ոչ մի չար ուժ չի անցնում հայրենակուռ իմ կողքով:
Իմ հողեղեն տենչերին ոգեղենը հյուսեցիր,
Ձրդեղեցիր իմ կամքը, Քաջն Հայկի հրի մեջ,
Քո պատգամով օծելու ծանր բեռը ուսեցիր,
Բուրվառելով քո հոգին ու քո սիրտը լուսառէջ:
Արծաթվեցին քունքերդ, ու ձյուն իջավ մազերիդ,
Քո ճերմակում Չարենցի երգած Մասիսն եմ տեսնում,
Համբարձումյան գերաստղի աստղալեզու դասերով
Թևեր առած Արցախի Մռովն ու Քիրսն եմ տեսնում:
Ամեն եկող նոր սերունդ դասիդ դռներն է բացում,
Քեզ վստահում թոռների ու ծոռների ապագան,
Երախտիքի իմ խոսքը հնչում է ոնց հիացում,
Քրիստոսված քո սիրով տիեզերք ես արևկա:
Իմ զինվորյալ ուսուցիչ, իմ Անդրանիկ, իմ Ավո,
Ազատաբաղձ իմ ոգու հայրենաշունչ դու իմ դաս,
Աշխարհացիր սփյուռքն էլ ջերմանում է քո հրով
Ու հաստատում, որ ազգը կապրի հավերժ՝ քանի կաս:

### ԻՄ ՄԱՅՐ ԵՐԿԻՐ

Քո դեմ-դիմաց ոսոխն է չար,
Շնագայլի ոռնոցներով,
Իր պարտության մեջ հիշաչար՝
Նենգ ու զազիր հիշոցներով:
Քեզ այցելող, քեզնով հպարտ,
Քո ամեն մի բարեկամի,
Սև ցուցակում ազերական
Համարվում է իր թշնամին:
Գորշ գայլերի մռութով գորշ,
Հոտոտում է ճամփեքը քո,
Քո հարվածից պարտվածներին
Պսակում է դատարկ փառքով:
Ես զինվորդ, երգիչդ քաջ,
Դու իմ զենքը և բառն ես իմ,
Ձեռքս դրած սրտիս վրա՝
Շշնջում եմ՝ դու մայրն ես իմ:
Մոր պատիվը որդու համար
Ամեն ինչից թանկ ու վեր է,
Կռվի դաշտում կամք է համառ,
Հաղթանակի կուռ թևեր է:
Ես կռվում եմ բաց ճակատով,
Ձեմ հարվածի քնած մարդուն,
Ես գյադա չեմ ազերական,
Սասնա ծուռ եմ՝ ուժն իմ սրտում:
Մեր երկինքը Աստծուց թաքուն
Թուրք-ազերին պատեց մուժով,
Մենք պատմության մեծ սխալը
Պիտի ուղղենք թրի ուժով:

### ՀԱՅՈՒՀԻ

Թխաշող մազերդ փունջ արած,
Փռել ես նրբագեղ ուսերիդ,
Դա լեռան աղբյո՞ւրն է վարարած,
Թե՞ վառվող ցոլքերն են հույսերիդ:
Առաջին սիրո կանչե՞րն են,
Թե՞ ցոլքը մանկության օրերիդ,
Արևին առաքած երա՞զն է՝
Մայրիկիդ թևավոր օրորի:
Հայուհի, իմ հրաշք հայուհի,
Դու քայլող Անահիտ դիցուհի,
Տիգրանված կապույտը քո հոգու
Բերել ես մեր դաժան դարերից,
Բերել ես՝ մաղելով ցավերդ,
Փնջելով վարդերը բուրավետ,
Բերել ես՝ թաղելով դավերը,
Դառնալով բարություն առհավետ:
Թող շոյեմ վարսերդ, իմ անգին,
Թող շոյեմ՝ թեկուզև բառերով:
Եռացող մաճառ է սերդ հին,
Որ չի հնացել դարերով:
Հայուհի՛, դու անմար արեգակ,
Դու սիրո օրհներգ կրծքիս տակ:

## ՎԵՐՋԻՆ ԷՋ

# ԹԵ ԻՄԱՆԱՅԻՐ...

Լուսավոր հոգիների մարումը նման է բնության մեջ տեղի ունեցող Լուսնի և Արևի խավարումներին: Երբ շուրջդ ես նայում ու զգում, որ պակասեց լույսը, ու շատ ես ափսոսում, որ այլևս չես լսելու հոգիդ ջերմացնող խոսքերը, չես տեսնելու բարություն շատրվանող դեմքը:

Կորստյան մեծ ցավը կեղեքում է հոգիդ, ու սփոփանքի խոսքեր չես գտնում:

Այդպես մարեց լուսավոր մի կետ հիշողությանս մեջ:

Ամալյա Շիրոյան… անուն, որ շատերի հոգում դաջվեց իբրև պայծառ ու լուսավոր մի կերպար: Անուն, որ դեռ շատ երկար է հնչելու ոչ միայն ընկերների, հարևանների, հարազատների, այլև իրեն աշակերտած տասնյակ հարյուրավոր սաների շուրթերից, որոնց բախտ է վիճակվել լսելու սիրելի ուսուցչուհու ոսկեղենիկ հայերենը:

Երբ խոսում էր նա, թվում էր, թե բարդին է ներդաշնակ երաժշտությամբ սոսափում, թռչունի դայլայլն ես ունկնդրում, գիժ առվակ է խոխոջում, լեռնային աղբյուրն է գլգլում… Հմուտ մանկավարժի շուրթերից ուղղակի լույս ու մեղր էր թափվում:

Մուսալեռցի հայուհին անցյալ դարի 70-ականներին իր ընտանեկան երջանկությունը գտավ արցախցու հետ ամուսնանալով: Մուսալեռցիների պես արցախցիներն էլ էին խիզախ ու աննկուն, և նրա համար այս փոքրիկ երկիրը դարձավ հարազատ հայրենիք:

Ոսկեղենիկ հայերենը նրա շուրթերին թևեր էր առնում ու տարածվում լսարանում:

Հրաշալի մանկավարժին կարելի էր ժամերով լսել ու երբեք չհոգնել:

Ինձ բախտ է վիճակվել տարիներով նրա հետ միասին Կարմիր խաչի լիազորությամբ միևնույն առաքելությունը կատարել՝ դասախոսություններով հանդես գալ տարբեր լսարաններում (հիմնականում դպրոցներում): Մոտիկից շփման արդյունքում ես ձեռք եմ բերել պարզ ու անկեղծ մի գործընկերոջ, որից միայն դրական լիցքեր կարելի էր ստանալ, որովհետև չարն ու նախանձը նրա բնավորության մեջ իսպառ պակասում էին:

Եվ այսօր, սիրելի՛ Ամալյա, դու լքեցիր բարության շարքերը: Երկնային դրախտի դռները բացվեցին քեզ նման լուսավոր հոգու առաջ, ու դու գնացիր՝ ձուլվելու սուրբ հոգիներին:

Հարյուրավոր մարդկանց աչքերից լուսե արցունքներ քամեցիր: Ծով արցունքներ, որ վկայում են քո հանդեպ տածած մեծ սիրո ու խոնարհումի մասին:

Թե իմանայիր՝ որքա՜ն ենք սիրում քեզ…

Իմ լուսահոգի ընկերուհի, լուսասփյուռ իմ բարեկամ, դու ընդամենը 62 տարեկան էիր և դեռ ինչքա՜ն բան ուներիր տալու սերունդներին, ինչքա՜ն բարություն ուներիր սփռելու շուրջդ…

Ինչու՞ է կյանքը այսքան դաժան լավ մարդկանց հանդեպ:

Բարի ճանապարհ քեզ դեպի երկնային արքայություն:

Արցախի զավակների արյամբ սրբագործված հողը թող փետուրի պես թեթև լինի քո լույս հոգու վրա:

Թե իմանայիր՝ որքա՜ն ենք քեզ սիրում… շատ ափսոս…

**Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ**
**Գ.Խնապատ**

*Խոսք հիշատակի*

# ՃԻՇՏ ԱՊՐԱԾ ԿՅԱՆՔ

Եվս մի ջահակիր բռնեց անմահության ուղին: Ապրեց, վառվեց, սպառվեց լույս տալով: Կարևորն այն չէ, որ երկար չես ապրել, այլ այն, որ ճիշտ ես ապրել: Դու քայլեցիր լույսի ճանապարհով, եղար սերմնացան գեղեցիկի ու վեհի՝ դեպի մեծ կյանք ճանապարհելով բազում սերունդների:

Կյանքի 63-րդ տարում մեր շարքերից հեռացավ գիր ու գրականության, բառ ու բանի անխոնջ մշակ, լույսի ու բարու սերմնացան Ամալյա Շիրոյանը: Հեռացավ՝ թողնելով լուսավոր հետագիծ, գեղեցիկ ու իմաստավորված կյանք:

Ընդհատվեց քո երկրային կյանքը, սիրելի՛ Ամալյա:

Մենք հավատում էինք (դու էլ էիր հավատում), որ կհաղթես դաժան ու անբուժելի ցավին, հավատում էինք, որովհետև դու ուժեղ էիր, կյանքին՝ սիրահար: Ճակատագրից խուսափել չի լինի: Անողոք մահը խլեց քեզ մեր շարքերից: Խլեց կյանքդ, բայց անունդ չի կարող. քո հիշատակը միշտ վառ կմնա բոլոր քեզ ճանաչողների սրտերում:

Ամալյա Շիրոյանը ծնվել է 1952թ. հուլիսի 21-ին Էջմիածնի շրջանի Մուսալեռ ավանում: 1957թ. ընդունվել է տեղի միջնակարգ դպրոցը: 9-10-րդ դասարանները սովորել է Երևանի Ե. Չարենցի անվան միջնակարգում: Ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: Մանկավարժական գործունեությունը սկսել է Ակնալճի դպրոցում:

1976 թ. ամուսնացել և տեղափոխվել է ԼՂ Ասկերան քաղաքը և մեր դպրոցում էլ աշխատել է մինչև կյանքի վերջը՝ վայելելով գործընկերների, ծնողների ու աշակերտների սերն ու հարգանքը: Նրա մանկավարժական ողջ գործունեությունը նվիրում էր իր առաքելությանը: Իր սաների առջև բացելով կյանքի ու մայրենիի գեղեցիկ դռները՝ իր անձնական օրինակով սովորեցրել է լինել բարի ու արդարացի, ազնիվ ու կատարյալ, զգալ գեղեցիկը, գնահատել այն: Նա իր յուրաքանչյուր դաս վարում էր խանդավառված՝ խանդավառելով նաև մանկական հոգիները: Ընկեր Շիրոյանի խոսքը գեղեցիկ էր, ազդեցիկ, իսկ ձայնը՝ գերող, ասես շոյում էր լսելիքդ, պարուրում հոգիդ անուշ երազով: Ուսուցչուհին իր հմայիչ խոսքով կարողանում էր դասարանը տանել դեպի անրջային, գունագեղ աշխարհ: Նա մարդկանց հոգեկան ներաշխարհը թափանցելու բացառիկ կարողություն ուներ, հեշտությամբ էր գտնում իր սաների հոգու բանալին, զգում երեխայի ներքին ապրումները:

Չափազանց նուրբ ու զգայուն, համեստ ու կոկիկ՝ հուսահատվել չգիտեր, օժտված էր զարմանալի լավատեսությամբ, ուներ պատասխանատվության մեծ զգացում, խստապահանջ էր, բայց և մայրաբար բարի ու ներողամիտ, չուներ քինախնդրություն: Անսահման էին հոգու սերն ու ջերմությունը: Բոլորի համար խոսք ուներ, կարեկցում էր դիմացինին, օգնում, ինչով կարող էր: Նրան կարելի էր վստահել ցանկացած պահի. թափանցում էր դիմացինի հոգու խորքը՝ հոգին դարձնելով գաղտնարան: Ում գեթ մի անգամ բախտ է վիճակվել հաղորդակցվել նրա հետ, չի կարող մոռանալ նրան: Նրան ճանաչողները գիտեն, որ նա հիանալի մանկավարժ էր, նվիրված կին, ընկեր ու բարեկամ, սիրասուն մայր ու հոգատար տատիկ:

Մնա՜ս բարով, նվիրյալ անձնավորություն, բարի ու ազնիվ ընկեր: Քո լուսավոր հոգին կապրի մեզ հետ, կապրես մեր նվիրական հուշերում:

*Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ*

# ՁՄԵՌԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՃԱՄԲԱՐ՝ ԾԱՂԿԱՁՈՐՈՒՄ

Ձմռան մի պայծառ օր մենք՝ Ստեփանակերտի հ. 2 հիմնական դպրոցի «Բողբոջ» գրական խմբակի անդամներս (ղեկավար՝ Անահիտ Մեսրոպյան) հրավեր ստացանք Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրից՝ իրենց աշակերտների հետ մասնակցելու ձմեռային ուսումնական ճամբարին: Ես վաղուց էի ցանկանում մոտիկից ծանոթանալ այդ կրթահամալիրին: Վերջապես իրականացավ ցանկությունս: Տեղյակ էի, որ արցախցիների և սեբաստացիների միջև ջերմ, բարեկամական կապեր են ստեղծված: Անչափ հետաքրքիր անցավ մեր ճանապարհորդությունը: Ուրախ տրամադրությունը, երգն ու պարը, ծիծաղն ու խինդը ամբողջ ճանապարհին ուղեկցում էին մեզ: Երևան հասնելուն պես մեզ ջերմորեն դիմավորեց կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանը՝ մի խումբ աշակերտների հետ:

Հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, մենք կրթահամալիրի ներկայացուցիչների հետ ուղևորվեցինք Հայաստանի չքնաղ, գեղատեսիլ վայրերից մեկը՝ Ծաղկաձոր: Կարծես հեքիաթային մի աշխարհ ընկանք: Գեղեցիկ էր ամեն ինչ՝ բնությունը, շրջապատը, մարդկանց ջերմ վերաբերմունքը: Շուրջբոլորը սպիտակ էր, ձյունափայլ:

Ծաղկաձորում է գտնվում պատմական, հնամյա Կեչառիսի վանքը, որը 11-13-րդ դարերի ճարտարապետական կոթող է: Դարերի ընթացքում այն բազմիցս ավերվել և նորոգվել է: Մենք եղանք այնտեղ: Այն անչափ տպավորիչ էր և հմայիչ:

Այնուհետև եղանք Օրբելի եղբայրների

տուն-թանգարանում: Ուղեվար Սիրանուշ Հակոբյանը մեզ մանրամասն ներկայացրեց նրանց անձնական իրերը, գործունեությունը և Օրբելի եղբայրների մոր դաշնամուրի անզուգական նվագով ուղղակի հիացրեց մեզ:

Տպավորիչ էր նաև Ծաղկաձորի ճոպանուղին: Մենք տեսանք շատ զբոսաշրջիկների, դահուկորդների և համարձակություն ունեցանք նրանցից հարցազրույց վերցնել: Պարզվեց, որ շատերը արտերկրից են եկել և նույնպես հմայված են Հայաստանի բնաշխարհով: Երկար զրուցելուց հետո իմացանք, որ նրանք արդեն երկրորդ, երրորդ անգամ են այցելում:

Երկու օրում հասցրինք շփվել սեբաստացիների հետ, մտերմանալ և միասին ուրախ երեկոներ անցկացնել:

Մենք մասնակցեցինք կրթահամալիրի Մարմարյա սրահում տեղի ունեցած ավանդական Մեդիաուրբաթին: Մեր խմբի Դավիթն ու Մարիան հիացրին իրենց կատարումներով: Մենք էլ շատ բան սովորեցինք ու մեզ հետ բերեցինք:

Երևան հասնելուն պես ընկեր Սոֆյայի հետ այցելեցինք Մատենադարան, որտեղ առաջին անգամ եմ եղել: Եղանք Հովհաննես Թումանյանի թանգարանում, որտեղ ժամանակակից սարքավորումների շնորհիվ կարողացանք տեսնել նրան: Այցելեցինք նաև Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան: Ինձ անչափ զարմացրեց մի հատիկ բրնձի վրա պատկերված նրա նկարը: Երեկոյան վայելեցինք գիշերային Երևանի գեղեցկությունը և Հ. Մալյանի անվան թատրոնում դիտեցինք «Սիրելի Պամելլա» ներկայացումը՝ Նարինե Մալյանի բեմադրությամբ:

Վերադարձի ճանապարհին մտանք Վազգեն Սարգսյանի և Պարույր Սևակի տուն-թանգարանները: Մեր այցելությունը համընկավ Պ. Սևակի ծննդյան տարեդարձին: Դրա առթիվ այնտեղ կազմակերպված էր գրական երեկո, որին մասնակցում էին Պարույր Սևակ գյուղի բնակիչները, հարազատները և մտերիմները:

Ես շատ տպավորված և հիացած եմ այս ձմեռային ճամբարով: Խմբի ղեկավար ընկեր Մեսրոպյանի քրտնաջան աշխատանքի շնորհիվ կարողացանք մասնակցել ճամբարին և մի շարք նոր բաներ սովորել: Մասնակցեցինք զբոսաշրջության և բնապահպանության թեմաներով սեմինար-պարապմունքների, արցախցի բանաստեղծ Սոկրատ Խանյանի ստեղծագործություններով կազմեցինք էլեկտրոնային գիրք և հայտ ներկայացրինք «Դիջիթեք-2015»-ին:

Այս ամենի համար խմբի անունից խորին շնորհակալություն եմ հայտնում Ստեփանակերտի քաղաքապետ Սուրեն Գրիգորյանին, կրթության և սպորտի բաժնի պետ Կ.Մարգարյանին և մեր խմբի ղեկավար Ա. Մեսրոպյանին, որոնց հովանավորությամբ իրականացավ մեր ճանապարհորդությունը:

**Ռոմելա ԹԱՄՐԱԶՅԱՆ**
**Ստեփ. Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմն. դպրոցի 8 «բ» դասարանի աշակերտուհի**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼՂՀ գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից սույն թվականի հունվարի 26-ից սկսված է միջնակարգ հանրակրթական ծրագիր իրականացնող հաստատությունների (անկախ կազմակերպահրավական ձևից) շրջանավարտների «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Օտար լեզու» (ռուսաց լեզու, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն), «Ստեղծագործական աշխատանք» առարկաներից միասնական և կենտրոնացված (2015թ. բուհերի ընդունելության), պետական ավարտական քննությունների կազմակերպման գործընթացը:

Միասնական և կենտրոնացված քննություններին մասնակցելու համար շրջանավարտը (դիմորդը) պետք է լրացնի դիմում-հայտ:

2014-2015 ուստարվա շրջանավարտները դիմում-հայտը լրացնում են իրենց ուսումնական հաստատություններում, նախորդ տարիների շրջանավարտները, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտները՝ ԼՂՀ գնահատման և թեստավորման կենտրոնում (հասցեն՝ ք. Ստեփանակերտ, Մարտունի 97):

Միասնական և կենտրոնացված քննություններին մասնակցելու համար անհրաժեշտ է՝

- 3x4 չափսի լուսանկար,
- անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- «Արցախբանկ» ՓԲԸ «Վերածնունդ» մասնաճյուղում Գնահատման և թեստավորման կենտրոնի 22311 008416500 հաշվի համարին յուրաքանչյուր քննությանը մասնակցելու համար փոխանցել 1500 (հազար հինգ հարյուր) դրամ և վճարի անդորրագիրը՝ կցել դիմում-հայտին:

Միասնական և կենտրոնացված քննությունների վճարից ազատվում են հետևյալ դիմորդները՝

- 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաները,
- ՀՀ և ԼՂՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձինք:

Վերոգրյալ խմբերին պատկանող անձինք դիմում-հայտին կցում են համապատասխան փաստաթղթերի պատճենները:

12-րդ դասարանների աշակերտները պետական ավարտական քննություններին հայտագրվում են իրենց ուսումնական հաստատություններում:

Դիմում-հայտերի ընդունման և պետական ավարտական քննությունների հայտագրման վերջին ժամկետը 2015թ. փետրվարի 24-ն է:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 97- 40 -51 հեռախոսահամարով:

*«Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն*

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 30.01.2015թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: